2019, ՀՈՒԼԻՍ Բ, ԹԻՎ 14 (538)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

11 հուլիսի **ՀՀ-ում Իսրայելի նորանշանակ դեսպանին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Իսրայելի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Էլիավ Բելոցերկովսկուն (նստավայրը՝ ք. Երուսաղեմ):

Հանդիպմանը ներկա էր նաեւ Իսրայելում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Արմեն Սմբատյանը:

Շնորհավորելով դեսպանին պաշտոնը ստանձնելու առթիվ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր բարեմաղթանքները բերեց դեսպանին:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց երկու ժողովուրդների պատմական առնչակցություններին ու ընդհանրություններին եւ երկու երկրների միջեւ ներկայում առկա հարաբերություններին: Խոսվեց նաեւ Երուսաղեմի Հայոց Պատրիարքության կարեւոր առաքելության եւ Իսրայելում հայ համայնքի կյանքի, ինչպես նաեւ տարածաշրջանային խնդիրների մասին:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ դեսպան Բելոցերկովսկին վստահեցրեց, որ իր պաշտոնավարման ընթացքում հնարավոր բոլոր ջանքերը կգործադրի երկկողմ կապերի ամրապնդման եւ խորացման համար: Վերջինս ընդգծեց նաեւ, որ տպավորված է Հայաստանի պատմությամբ, հայ ժողովրդով եւ նրա հարուստ մշակութային ժառանգությամբ:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Հայրապետն արդյունավոր առաքելություն մաղթեց դեսպանին:

14 հուլիսի **ՀԲԸՄ-ի ծրագրերով Հայաստան ժամանած երիտասարդներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կազմակերպած «Երաժշտական Հայաստան» եւ «Երեւանի ամառային փորձառություն» ծրագրերի շրջանակներում տարբեր երկրներից Հայաստան ժամանած մի խումբ հայ երիտասարդների՝ ուղեկցությամբ ծրագրերի ղեկավարների:

Վեհափառն ընդգծեց, որ մատաղ սերնդին ազգային եւ հոգեւոր արժեքներով կրթելու եւ դաստիարակելու շնորհիվ է, որ սփյուռքում ապրող հայորդիների մտքում ստեղծվում է հայրենիքի մի պատկեր, որն էլ խթան է հանդիսանում Հայաստան այցելելու համար:

Հայոց Հովվապետն իր գնահատանքը բերեց

Հանդիպմանը «Երեւանի փորձառություն» ծրագրի ղեկավար Գայանե Մանուկյանը ներկայացրեց երիտասարդներին՝ հայցելով Նորին Սրբության հայրական օրհնությունը:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը կարեւորեց դեպի հայրենիք նմանատիպ այցելությունների կազմակերպումը, քանի որ դրանք ազգային ապրումների նորոգման լավագույն առիթ են տարբեր երկրներում հասակ առած հայորդիների համար:

նաեւ Հայկական բարեգործական ընդհանուր միությանը՝ այսպիսի ծրագրերի իրականացման համար, որոնց շրջանակներում սփյուռքի երիտասարդները հնարավորություն են ստանում ծանոթանալու Հայաստանին, հաղորդ դառնալու Հայոց եկեղեցու պատմությանը եւ նրա սրբություններին, ինչպես նաեւ ձեռք բերելու մասնագիտական փորձառություն զանազան հաստատություններում եւ կառույցներում:

Անդրադառնալով հայապահպանության խնդիրներին՝ Ամենայն Հայոց Հայրապետը երիտասարդներին պատգամեց երբեք չդադարել պայքարել, հավատալ եւ արարել, հորդորեց յուրաքանչյուրին իր երկիր վերադարձին ակտիվորեն ներգրավվել ազգային կյանքի մեջ եւ իրենց ձեռք բերած գիտելիքներով օգտակարություն բերել ինչպես տեղի հայ համայնքներին, այնպես էլ՝ հայրենիքի առաջընթացին:

Նորին Սրբությունը պատասխանեց նաեւ երիտասարդների հարցերին՝ սփյուռքի հայկական համայնքների զանազան խնդիրների, հոգեւոր կյանքի եւ Մայր Աթոռի կողմից իրականացվող սոցիալական ծրագրերի վերաբերյալ:

19 հուլիսի **ՀՀ-ի արդարադատության նախարարին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանին:

Վեհափառ Հայրապետը ողջունեց նախարարի առաջին այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ անդրադառնալով Արդարադատության նախարարության կարեւոր առաքելությանը՝ երկրի օրինավոր եւ բարոր կյանքի կերտման գործում:

Նորին Սրբությունը նախարարին մաղթեց արդյունավոր գործունեություն եւ հաջողություններ իր ծառայության մեջ: Զրույցի ընթացքում խոսվեց ընդհանուր մարտահրավերների եւ հանրության մեջ օրենսդրության առնչությամբ անհանգստություն առաջացնող հարցերի մասին: Մասնավոր քննարկման առարկա դարձավ «Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան:

Ի պատասխան Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից առաջ քաշված մտահոգությունների՝ ՀՀ-ի արդարադատության նախարարը եւ նախարարի տեղակալ Քրիստինե Գրիգորյանը փաստաթղթի առնչությամբ ներկայացրեցին իրենց դիտարկումները:

21 հուլիսի **Սփյուռքահայ ուսուցիչներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց աշխարհի 15 երկրից Հայաստան ժամանած սփյուռքահայ 40 ուսուցչի՝ ուղեկցությամբ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի: Սփյուռքահայ ուսուցիչները համալսարանի նախաձեռնությամբ Հայաստանում մասնակցում են վերապատրաստման մեկամսյա դասընթացների:

Պարոն Ռուբեն Միրզախանյանն ընդունելության համար շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը՝ ընդգծելով Հայ Եկեղեցու եւ մասնավորաբար Վեհափառ Հայրապետի կողմից հայապահպանությանն ուղղված լայնածավալ աշխատանքները:

հույս հայտնեց, որ այցը Հայաստան եւ մասնակցությունը դասընթացներին դրական լիցքեր կհաղորդեն ուսուցիչներին՝ նոր ուժով եւ ավյունով շարունակելու իրենց բարդ ու դժվարին առաքելությունը:

Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ արձանագրեց, որ այս տարի Հայաստան ժամանած սփյուռքահայ ուսուցիչների մեջ մեծ թիվ են կազմում երիտասարդները, ինչը վկայում է, որ նոր սերունդը գալիս է ստանձնելու ավագ սերնդի աստվածահաճո գործը:

Բարձր գնահատելով հայապահպանության գործում սփյուռքահայ ուսուցիչների դրսեւորած նախանձախնդրությունը՝ Հայրապետը շեշտեց, որ

Այնուհետեւ ուսուցիչներին իր հայրական օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ մեծապես կարեւորելով արդեն ավանդույթ դարձած այս գեղեցիկ նախաձեռնությունը: Նորին Սրբությունը

մանկավարժները կարեւոր պատասխանատվություն են կրում այսօրվա եւ գալիք սերունդների դաստիարակության եւ կրթության համար:

Շարունակությունը՝ էջ 2

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Սփյուռքահայ ուսուցիչներին

Սկիզբը՝ էջ 1

Հանդիպմանը Նորին Սրբությունը նաեւ հետաքրքրվեց սփյուռքում գործող հայկական կրթօջախներով եւ ուսուցիչներին հուզող խնդիրներով:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Աստված օրհնի ու քաջառողջ պահի մանկավարժներին՝ իրականացնելու իրենց սրբազան առաքելությունը՝ ի սեր մեր աշխարհասփյուռ ժողովրդի:

22 հուլիսի

Հնդկաստան բուժման մեկնող զինվորականներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց տարբեր ժամանակահատվածներում հայրենիքի պաշտպանության համար ռազմական գործողությունների հետեւանքով հաշմանդամություն ստացած վեց զինվորականների, որոնք առաջիկայում կմեկնեն Հնդկաստան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Կալկաթայի Ս. Նազարեթ եկեղեցու վարչության նախաձեռնությամբ ու աջակցությամբ ստանալու անհրաժեշտ բուժումն ու վերջույթների պրոթեզավորումը:

Հանդիպման սկզբում ՀՀ-ի զինված ուժերի հովակների՝ հայրենիքը սեփական կյանքի գնով պաշտպանելու պատրաստակամությունը: Նորին Սրբությունը հաստատեց, որ Հայոց Եկեղեցու զորակցությունը արժանի գնահատանքն է հայոց հողի պաշտպանության նվիրական գործին իրենց կյանքն ընծայած հայորդիներին:

Վեհափառ Հայրապետը նաեւ նշեց, որ Մայր Աթոռի եւ Հնդկաստանի հայ համայնքի կողմից իրականացվող՝ վիրավորված զինվորների պրոթեզավորման այս ծրագիրը շարունակական է լինելու:

գեւոր առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանը հայցեց Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությունը՝ բուժման մեկնող հայորդիների հերթական խմբի համար՝ կարեւորելով այն զորակցությունը, որ Մայր Աթոռը տարբեր ծրագրերի միջոցով ցուցաբերում է Հայոց բանակին եւ հայ զինվորին:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր գնահատանքն ու օրհնությունը բերելով զինվորականներին, նշեց, որ յուրաքանչյուր հայի համար հպարտություն է տեսնել ազգի զաւակներին՝ հայրենիքի սեփական կյանքի գնով պաշտպանելու պատրաստակամությունը:

Իրենց հերթին զինվորականները երախտագիտություն հայտնեցին Հայոց Հայրապետին՝ հոգածու վերաբերմունքի համար, պատասխանեցին նաեւ իրենց կյանքի եւ ծառայության վերաբերյալ Նորին Սրբության հարցերին:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը Պահպանիչ աղոթքով օրհնեց զինվորականներին՝ մաղթելով, որ ամենակալ Տերը պարգեւի նրանց ուժ եւ եռանդ՝ հայրենանվեր ծառայությունը խաղաղության մեջ շարունակելու համար:

Ավստրալիայի Նյու Սաութ Ուելս նահանգի վարչապետին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց Ավստրալիայի Նյու Սաութ Ուելս նահանգի վարչապետ տիկ. Գլեդիս Բերեջիկլյանին:

Հայոց Հայրապետը վերստին շնորհավորեց տիկին Բերեջիկլյանին ընտրություններում արձանագրած հաղթանակի կապակցությամբ՝

բարձր գնահատելով նրա գործունեությունը ի նպաստ Ավստրալիայի Նյու Սաութ Ուելս նահանգի եւ կարեւոր դերակատարությունը հայ համայնքի կյանքում: Նորին Սրբությունը նաեւ գոհունակությամբ անդրադարձավ 2019 թ. փետրվար ամսին Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմ կատարած հովվապետական այցի ընթացքում տիկ. Գլեդիս Բերեջիկլյանի ցուցաբերած ջերմ ընդունելությանը, ուրախությամբ փաստեց հայ համայնքի կյանքում տեղ գտած դրական փոփոխություններն ու առաջընթացը:

Տիկ. Գլեդիս Բերեջիկլյանն իր հերթին ուրախություն հայտնեց մասնավոր այցով Հայաստանում գտնվելու եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելելու կապակցությամբ՝ մասնավորապես Նորին Սրբությանը ներկայացնելով այցից ստացած իր տպավորությունները:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ տիկ. Գլեդիս Բերեջիկլյանը խոսեցին Ավստրալիայի հայ համայնքի, սփյուռքի առջեւ ծառացած մարտահրավերների եւ հայապահպանության խնդիրների մասին: Անդրադարձ կատարվեց նաեւ Հայաստանի եւ Ավստրալիայի միջեւ հարաբերությունների ընդլայնման եւ համագործակցության զարգացման հեռանկարներին:

Հանդիպման ավարտին Ավստրալիայի Նյու Սաութ Ուելս նահանգի վարչապետը ծանոթացավ միածնաէջ Մայր տաճարի ամրակայման եւ հիմնանորոգության աշխատանքների ընթացքին:

23 հուլիսի

Ախալցխայի եւ Սամցխե-Ջավախքի ուխտավորներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ախալցխայի եւ Սամցխե-Ջավախքի ուխտավորներին՝ ուղեկցությամբ Ախալցխայի հոգեւոր հովիվ Հակոբ աբեղա Սահակյանի:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Հայրապետն իր օրհնությունը փոխանցեց ուխտավորներին՝ ընդգծելով, որ Վրաստան կատարած հովվապետական այցելության ժամանակ տեսել է ջավախայության զորավոր հավատքը, ազգային նկարագիրը կերտելու ջանքն ու եռանդը, ինչպես նաեւ սերն ու նվիրումը համայն հայության հոգեւոր կենտրոնի նկատմամբ:

Վեհափառ Հայրապետը հետաքրքրվեց դեպի հայրենիք ուխտագնացությունից ստացված տպավորություններով, ինչպես նաեւ Ախալցխայի եւ տարածաշրջանի հայության հոգեւոր կյանքով, առկա խնդիրներով:

Նորին Սրբությունը հորդորեց ուխտավորներին հավատարիմ մնալ իրենց նախնյաց ազգային ու հոգեւոր արժեքներին: Վեհափառը հատուկ ուշադրության արժանացրեց ուխտագնացությանը երիտասարդների մասնակցության փաստը՝ կարեւոր նկատելով, որ ճանաչեն ու հաղորդ լինեն այն սրբություններին ու արժեքներին, որոնք օգնել են հայ ժողովրդին հաղթահարել իրեն բաժին ընկած յուրաքանչյուր փարձություն:

Հանդիպմանը Նորին Սրբությունը նաեւ իր գնահատանքը հայտնեց Վիրահայոց թեմի հոգեւոր դասին՝ իրենց առաքելությունը նախանձախնդրությամբ եւ նվիրումով իրականացնելու եւ ազգային արժեքները պահպանելու համար:

Վերջում Հայոց Հայրապետն ուխտավորներին մաղթեց, որ Աստված նորոգի նրանց ուխտը՝ մշտապես պահելով Իր սիրո եւ խնամքի ներքո:

26 հուլիսի

ՀՀ-ում Չեխիայի նորանշանակ դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Չեխիայի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Բեդրիխ Կոպեցկուն:

Հայոց Հայրապետը, շնորհավորելով դեսպանին՝ նշանակման առիթով, մաղթեց բեղմնավոր ու արդյունավետ աշխատանք իր պատասխանատու առաքելության մեջ: Այնուհետեւ անդրադառնալով Հայաստանի եւ Չեխիայի միջեւ առկա բարեկամական սերտ հարաբերություններին ու գործակցությանը՝ Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ դրանք կլինեն շարունակական եւ բարի արդյունքներ կապահովեն երկու ժողովուրդների համար:

Ըստ Հայոց Հայրապետի՝ հայ-չեխական կապերի առավել ամրապնդման եւ զարգացման գործում կարեւոր դերակատարություն ունի Չեխիայի հայ համայնքը: Այս կապակցությամբ Գարեգին Բ Կաթողիկոսն իր գնահատանքը հայտնեց Չեխիայի իշխանություններին՝ հայ համայնքի հանդեպ դրսեւորվող հոգատար վերաբերմունքի համար:

Իր հերթին նորանշանակ դեսպան Բեդրիխ Կոպեցկին, շնորհակալություն հայտնելով բարեմաղթանքների համար, Նորին Սրբությանը վստահեցրեց, որ իր ներդրումը կբերի հայ-չեխական փոխհարաբերությունների առավել զորացման ու զարգացման գործում:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաեւ Չեխիայի Կաթոլիկ Եկեղեցու եւ Մայր Աթոռի միջեւ հաստատված ջերմ հարաբերություններին եւ Չեխիայի Կաթոլիկ Եկեղեցու առաջնորդ, Պրահայի արքեպիսկոպոս, կարդինալ Դոմինիկ Դուկայի այցին Հայաստան:

Գեւորգյան հոգեւոր ճեմարանը հայտարարում է 2019–2020 ուս. տարվա ընդունելություն

Հայաստանում գործող հնագույն բուհը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանը (Աստվածաբանական համալսարան) հայտարարում է 2019 –2020 ուս. տարվա ընդունելություն:

Գեւորգյան հոգեւոր ճեմարան կարող են ընդունվել ՀՀ եւ այլ երկրների մինչեւ 25 տարեկան արական սեռի այն քաղաքացիները, որոնք ունեն միջնակարգ (կամ ավելի բարձր) կրթություն, զավակ են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ ցանկություն ունեն ուսանելու այն հաստատությունում, ուր կրթվել են Կոմիտաս վարդապետը, Հրաչյա Աճառյանը, Լեւոն Շանթը, Մակար Եկմալյանը, Ակսել Բակունցը, Դերենիկ Դեմիրճյանը եւ մեր ազգի այլ մեծեր:

Դիմել կարող են նաեւ Հայաստանի զինված ուժերում ծառայությունն ավարտած, զորացրված քաղաքացիները:

Ընդունվելու համար դիմորդները պետք է քննություններ հանձնեն հետեւյալ առարկաներից.

1. հայոց լեզու (գրավոր),
2. հայ գրականություն (բանավոր),
3. հայոց պատմություն (բանավոր),
4. երաժշտություն (երգեցողություն, լսողություն, ռիթմի զգացողություն),
5. օտար լեզու (անգլերեն՝ ստուգարք):

Անհրաժեշտ փաստաթղթերն են՝

- դիմում՝ ճեմարանի տեսուչի անունով (լրացվում է տեղում),
- ինքնակենսագրություն,
- միջնակարգ կամ ավելի բարձր կրթության վերաբերյալ փաստաթուղթ (ատեստատ կամ դիպլոմ),
- բնութագիր դպրոցի տնօրինությունից,
- բժշկական վավերացման տեղեկանք,
- անձնագրի պատճեն,
- երկու լուսանկար՝ 3x4 չափսի,
- զինվորական դրության վերաբերյալ փաստաթուղթ (կցագրման վկայական կամ զին. գրքույկ):

Դիմումներն ընդունվում են մինչեւ օգոստոսի 16-ը՝ երկուշաբթիից շաբաթ, ժամը 9:00-ից 17:00-ը, շաբաթ օրը՝ մինչեւ 14:00-ը:

Հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Գեւորգյան հոգեւոր ճեմարան, հեռախոս՝ 010 517 180, էլ. հասցե՝ gevorgianseminary@gmail.com, ֆեյսբուքյան էջ՝ https://www.facebook.com/gevorgianseminary/:

Մայր Աթոռում տեղի ունեցան լսումներ Ստամբուլյան կոնվենցիայի շուրջ

Հուլիսի 16-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, առկա մտահոգություններին ընդառաջ, տեղի ունեցան լսումներ՝ Ստամբուլյան կոնվենցիայի վերաբերյալ, որոնց մասնակցում էին թեմական առաջնորդներ, Մայր Աթոռի կառույցներում պաշտոնավարող եպիսկոպոսներ, միաբաններ եւ քահանաներ:

Հանդիպման սկզբում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր խոսքն ուղղելով ներկաներին, կարեւորեց կոնվենցիայի առնչությամբ ինչպես հանրության, այնպես եւ եկեղեցականների մտահոգությունների շուրջ հետեւողական քննարկումների անցկացումը:

Փաստաթղթի վերաբերյալ զեկույցներով հանդես եկան Մայր Աթոռի իրավախորհրդատվական հանձնախմբի անդամներ ի. գ. դ. Գեւորգ Դանիելյանը եւ Արա Զոհրաբյանը՝ մասնավորապես անդրադառնալով վերջին շրջանում հասարակության մեջ լայնորեն քննարկվող հիշյալ փաստաթղթի վիճահարույց դրույթներին:

Քննարկման ընթացքում զեկուցողները պատասխանեցին նաեւ ներկաներին անհանգստացնող հարցերին, լուսաբանություններ տվեցին կոնվենցիայի շուրջ Եվրոպայի խորհրդի տարբեր անդամ երկրների արձագանքների մասին:



Հայաստանի եպիսկոպոսների եւ թեմական առաջնորդների ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ «Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրանց դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (Ստամբուլյան կոնվենցիա) վերաբերյալ

Վերջին շաբաթներին հանրության կողմից լայնորեն քննարկվում են Հայաստանի Հանրապետության 2018 թ. հունվարին ստորագրած «Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրանց դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի նպատակները, հիմնադրույթներն ու բանաձեւումները, ինչպես նաեւ՝ դրա հետագա վավերացման նպատակահարմարությունը:

Եկեղեցին ողջունում է յուրաքանչյուր նախաձեռնություն, այդ թվում եւ իրավական փաստաթուղթ՝ կոչված բացառելու բռնությունը ընտանիքում եւ սոցիալական այլ միջավայրում: Բռնության ցանկացած դրսեւորում դատապարտելի է: Անկախ գոյություն ունեցող արարչաստեղծ կենսաբանական տարբերություններից՝ բոլոր մարդիկ գտնվում են Աստծո անփոփոխ խնամքի ներքո, ինչպես վկայված է Հովհաննես առաքյալի ընդհանրական առաջին նամակում. «Տեսեք՝ ինչպիսի սեր շնորհեց մեզ Հայրը, որպեսզի մենք կոչվենք Աստծու զավակներ» (Ա Հովհ. 3.1):

Բռնության, ինչպես եւ ցանկացած չարիքի կանխարգելումը եւ դրա դեմ պայքարը պետք է իրագործվեն այնպիսի միջոցառումներով, որոնք պատճառ չեն հանդիսանա նոր մեղքի ու նոր չարիքի: Այս առումով խիստ մտահոգիչ ու անընդունելի են կոնվենցիայում առկա որոշ գաղափարներ ու հասկացություններ:

Եկեղեցու բարոյագիտական ուսուցումների հետ անհամատեղելի են այն բանաձեւումները եւ դրանց մեկնաբանությունները, որոնք կենսաբանական երկու սեռից զատ՝ սահմանում են սեռի այլ տարբերակումներ (Կոնվենցիա, 4-րդ հոդվածի 3-րդ մաս, Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման ու դրանց դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց, Ստամբուլ, 11.05.2011, հոդված 4, կետ 53, հոդված 60, կետ 313): Հիշյալ սահմանումները, փաստորեն, ճանաչում են անձի՝ անգամ սեփական «սեռը ընտրելու ազատության» իրավունքը: Մարդու իրավունքների եւ ազատությունների քրիստոնեական ուղղափառ ընկալումը բացառում է մարդու աստվածաստեղծ ինքնության աղճատումը կամ փոփոխությունը:

Հաշվի առնելով կոնվենցիայի «սեռն ընտրելու ազատության» ենթատեքստը՝ լուրջ տարակուսանքների եւ մեկնաբանությունների տեղիք է տալիս նաեւ կոնվենցիայի պահանջը մասնակից պետություններից՝ արմատախիլ անել այն ավանդույթները, որոնք հիմնված են «կանանց եւ տղամարդկանց կարծրատիպային դերաբաժանման գաղափարի վրա»՝ «կանանց եւ տղամարդկանց վարքագծի սոցիալական եւ մշակութային վարվելակերպերում փոփոխություններ մտցնելու նպատակով» (Կոնվենցիա, 12-րդ հոդվածի 1-ին մաս):

Կոնվենցիան մասնավոր հրահանգ է պարունակում նաեւ, որ «պաշտոնական ուսումնական ծրագրերում եւ կրթական բոլոր մակարդակներում» ներդրվեն ուսումնական նյութեր՝ առնչված նաեւ «կարծրատիպերից զերծ գենդերային դերերի» գաղափարին (հոդված 14)՝ առանց հստակեցնելու ուսուցման համար տվյալ եզրաբանության բովանդակությունը:

Սեռի նկատմամբ կոնվենցիայի մոտեցումները հակադրության մեջ են նաեւ ընտանիքի վերաբերյալ Եկեղեցու անփոփոխ վարդապետության հետ, որի վրա խարսխված է ընտանիքի ազգային մեր ընկալումը: Եկեղեցու ուսմունքի համաձայն՝ ընտանիք կարող են կազմել այրը եւ կինը, որոնք սուրբ պսակով նվիրագործված ամուսնությամբ դառնում են մեկ մարմին եւ մեկ ամբողջություն, ինչպես ավանդում է Սուրբ Գիրքը (Ծնն. 2.24, Մարկ. 10.7–8, Եփես. 5.31): Մեր ժողովուրդը մշտապես մեծարել է կնոջը սուրբ Աստվածամոր օրինակով, գնահատել նրա դերն ու առաքելությունը ընտանիքում, հասարակական եւ ազգային կյանքում: Տղամարդու եւ կնոջ միությամբ ընտանիքը, հաստատված սիրո, փոխադարձ հարգանքի ու հասկացողության վրա, հիմնական երաշխիքներից է ազգի հարատեւության, անհատի դաստիարակության ու հոգեւոր աճի եւ պետության պատասխանատու քաղաքացու ձեւավորման համար: Հետեւաբար, ընտանիքում բռնության կանխարգելման եւ դրա դեմ պայքարի միջոցառումները պետք է ելակետ ունենան ընտանիքի սրբության ու նվիրականության բնույթն ու արժեքը:

Արդ, նկատի առնելով, որ ազգային-հոգեւոր մեր ինքնության եւ անվտանգության շահերի տեսանկյունից կոնվենցիայում առկա են խիստ մտահոգիչ դրույթներ ու հասկացություններ՝ հորդորում ենք հայրենի իշխանության պատասխանատու մարմիններին զերծ մնալ փաստաթղթի վավերացումից:

Հայրենի պետության զորացման եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդի լուսավոր գալիքի կառուցմանն ի նպաստ կարեւորում ենք ընտանիքում եւ հայրենի կրթական համակարգում հոգեւոր, բարոյական եւ ազգային արժեքներով նոր սերնդի դաստիարակությունն ու կրթությունը, ինչպես նաեւ այս նպատակով զանգվածային լրատվամիջոցների պատասխանատու գործունեության արդյունավորումը:

Եկեղեցին հովվական իր առաքելությամբ շարունակելու է հոգեւոր խնամք ու աջակցություն ցուցաբերել հայ ընտանիքներին՝ հաղթահարելու ներընտանեկան կյանքի խոչընդոտները եւ զորանալու ընտանիքի սրբության աստվածապարգեւ շնորհով:

Մեր աղոթքն է, որ Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոս Իր հանապազ խնամքի ներքո պահի մեր ժողովրդին, ամուր եւ հարատեւ սիրով ջերմացնի ընտանիքները եւ շինություն պարգեւի հայրենի մեր պետությանը, արդյունավորի հանուն մեր հայրենիքի ու ժողովրդի առաջընթաց կյանքի ներդրված բոլոր ջանքերը:

Քահանայից պատրաստման լսարանը հայտարարում է 2019–2020 ուս. տարվա ընդունելություն

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քահանայից պատրաստման լսարանը հայտարարում է 2019–2020 ուս. տարվա ընդունելություն: Ընդունվել կարող են մինչեւ 45 տարեկան, ամուսնացած կամ ամուրի, բարձրագույն կրթություն ունեցող այն անձինք, որոնք զավակ են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու: Ուսումը եռամյա է: Ուսման ընթացքում սաները կստանան կրթաթոշակ:

Ընդունելության համար դիմորդները պետք է մասնակցեն հարցազրույցի՝ հետեւյալ նյութերի շուրջ.

- Սուրբ Գրքի իմացություն,
- Հայ Եկեղեցու պատմություն,
- հայ ժողովրդի պատմություն,
- հայ գրականություն,
- եկեղեցական փորձառություն,
- ինքնաարտահայտվելու կարողություն:

Դիմումները ներկայացնել Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչի անունով:

Անհրաժեշտ փաստաթղթերն են՝

- դիմում՝ ԳՀՃ տեսուչի անունով (լրացվում է տեղում),
- զինվորական դրության մասին փաստաթուղթ (բնօրինակը),
- համաձայնագիր՝ կնոջից (ամուսնացյալի դեպքում),
- երաշխավորագիր (թեմի առաջնորդից կամ շրջանի հովվից),
- բարձրագույն կրթության վկայական (բնօրինակը),
- բժշկական վավերացման տեղեկանք,
- տեղեկանք բնակավայրից,
- մկրտության վկայական,
- ինքնակենսագրություն,
- անձնագրի պատճեն,
- 4 լուսանկար (3x4):

Փաստաթղթերն անձամբ ներկայացնել Գեւորգյան հոգեւոր ճեմարանի քարտուղարություն մինչեւ ս/թ օգոստոսի 10-ը: Մանրամասների համար զանգահարել՝ (+374 10) 517–180:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հայտարարում է մրցույթ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հայտարարում է մրցույթ՝ Վեհարանի նորակառույց հանդիսասրահի բեմի որմնանկարի համար (չափը՝ 5x14 մ, թեմա՝ «Նոյյան էջքն Արարատից մինչեւ մեր օրերը. Հայոց պատմության եւ Հայոց Եկեղեցու երեւելի դեմքեր, անցքեր, մշակութային ժառանգություն»):

Մրցույթին մասնակցել ցանկացող արվեստագետները ս. թ. հուլիսի 25-ին՝ ժամը 14:00-ին, հրավիրվում են ք. Երեւանի Ս. Կաթողիկե եւ Ս. Աննա եկեղեցիների հարեւանությամբ գտնվող ՀԵՀԵՄ-ի գրասենյակ՝ մրցութային հանձնախմբի հետ հանդիպման:

Որմնանկարի էսքիզները (80x150 սմ, կտավ, յուղաներկ) պետք է ներկայացնել մինչեւ 2019 թ. սեպտեմբերի 1-ը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանների գրասենյակ:

Մրցույթին ներկայացված լավագույն երեք էսքիզների համար սահմանված է դրամական պարգեւ, ըստ այսմ՝ 1.500.000 ՀՀ դրամ (առանց հարկերի), 1.000.000 ՀՀ դրամ (առանց հարկերի), 500.000 ՀՀ դրամ (առանց հարկերի):

Նոր տնօրիններ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ Տիրան եպս Պետրոսյանը նշանակվել է Կենտրոնական Եվրոպայի եւ Շվեդիայի հայրապետական պատվիրակ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Արիս աբեղա Տոնոյանը նշանակվել է Շողակաթ վանքի վանահայր՝ Վանորեից տեսչի իշխանության ներքո:

Մանուկ քհն. Զեյնալյանը ծառայության է կոչվել ՀՀ զինված ուժերի հոգեւոր առաջնորդությունում՝ ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդի իշխանության ներքո:

Կարգալույծ են հռչակվել

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Խաչատուր աբեղա Կնյազյանը:

Տնօրինության համար հիմք է ծառայել Խաչատուր աբեղայի՝ եկեղեցական ծառայությունից հրաժարվելու մասին խնդրագիրը:

Կարգալույծ եկեղեցականն այսուհետ կդասվի աշխարհականների շարքին՝ Սարգիս Կնյազյան ավազանի անունով:

Հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել նաեւ Իրաքի հայոց թեմի հոգեւոր սպասավոր Նարեկ ավգ քհն. Իշխանյանը:

Տնօրինության համար հիմք է ծառայել Իրաքի հայոց թեմի առաջնորդ Ավագ արք. Ասատուրյանի միջնորդագիրը:

Կարգալույծ եկեղեցականն այսուհետ կդասվի աշխարհականների շարքին՝ Արմեն Իշխանյան ավազանի անունով:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգի

Ընտանիքն արարչագործության համատեքստում. ընտանիքն Աստծո դրախտում

«Ընտանիքը հասարակության բյուրեղն է»
(Հյուգո)

«Ընտանիքը մշտապես կլինի հասարակության հիմքը»
(Բալզակ)

Մատամ Թեոդոր (1606–1676), «Սուրբ ընտանիք», ՀԱՊ

Աստվածաշունչը՝ որպես յուրօրինակ, ինքնատիպ ու հեղինակավոր աղբյուր, բավական հիմնարար ու համակողմանի տեղեկություն է հաղորդում «ընտանիք» հասկացության մասին: Աշխարհի, ավելին՝ երկնքի եւ երկրի արարումը հանգում է մարդ ստեղծելու նպատակին, ինչպես բացատրում է ս. Գրիգոր Լուսավորիչը. *«Յայսոսիկ երեւի Աստուծոյ սէրն ի մեզ, զի վասն մեր արար զերկինս եւ զերկիր եւ որ ի նա արարածք»*: Միաժամանակ անուրանալի է թե՛ այն, որ առանց Աստծո նախախնամ տեսչության ոչ մի արարած չի կարող գոյություն ունենալ *(Իմաստ., ԺԴ 3. ԺԵ 2 Մատթ., Զ 25–34. Ղուկ., ԺԲ 22–30)* եւ թե՛ այն, որ մարդու՝ բնությանը տեր լինելու բնական կոչումն ու Աստծո արարչական կամքի միջնորդ լինելն աշխարհում հիմնված են «ընտանիքի տիպարի» վրա *(Ծննդ. Ա 28. Թ 1–3, Սաղմ. Ը 7, Իմաստ. Թ 1–3, Սաղմ. ճԺԳ 24)*: Ընտանիքն է այն դարբնոցը, որը կոչված է կենսականացնելու Աստծուց պարգեւ տրված արարչագործելու շնորհն ու շարունակական իմաստով ապահովելու հոգեւոր անվտանգությունը *(Ծննդ. Բ 21, Ե 3, Սաղմ. ԾԱ 7, Հովհ. ԺԶ 21, Եփես. Ե 33)*: Առավել հստակ՝ երբ Աստված ասաց. «Մարդ ստեղծենք», նկատի ուներ ընտանիքը. *«Ժառանգական մարմնավոր ու հոգեւոր առանձնահատկությունք ազգերի, ընտանիքների ու ցեղերի մեջ պարզապես ցույց են տալիս, որ ծննդաբերությունը հիմնական պայմանն է այս խնդրում: Սակայն, որովհետեւ մարդն Աստուծո պատկերն է եւ առանց աստվածային կամաց ու հաղորդակցության նա դառնում է սոսկ մարդու պատկեր» (Ծննդ. Ե 3)*, (Արշակ Տեր-Միքելյան, «Քրիստոնեական»):

Ընտանիքը *(հմմտ. Մատթ. Ե 48, Զ 7–8, Գործք ԺԷ 26, 29, Ա Պետ. Ե 7)* սկզբնավորվում է Աստծո օրհնությունից, հետեւապես նաեւ ու հատկապես Աստծո համար է *(հմմտ. Հեսու ԻԴ 15–24, Եսայի Ա 19–20, Կողոս Ա 16)* եւ առաքելություն ունի ապահովելու ինչպես հոգեւոր-բարոյական կրթություն, հարեւնման հանրային կյանքում եկեղեցու ունեցած գործառույթի, այնպես էլ դաստիարակությամբ պայմանավորված միություն ու հոգատարություն. *(Մատթ. ԺԹ 8, հմմտ. Բ Տիմ. Ա 5)*: *«Ըստ այսմ՝ ընտանիքը թե՛ սիրո արտաքին իրականացումն է եւ թե՛ իրականացուցիչը: Իբրեւ սիրո իրականացուցիչ՝ ընտանիքը թե՛ սիրո կապերն է բազմացնում եւ ընդարձակում եւ թե՛ ինքը սիրո վարժարան է դառնում՝ բնականապես սովորեցնելով մարդկանց եւ գործնականապես վարժեցնելով սիրո զգացմանց համեմատ գործունեության մեջ: Այդպիսի վարժությունը սկսվում է նախ՝ երկու ամուսինների, ապա՝ ծնողաց ու որդիների, հետո՝ եղբայրների ու քույրերի, այնուհետեւ ամուսինների եւ ազգականների, ընտանիքի եւ ազգականների մեջ եւ այլն, եւ այլն, այնքան ընդարձակությամբ, որքան նպաստում են հանգամանքների ու հարաբերությանց բարդությունները»* (Արշակ Տեր-Միքելյան, «Քրիստոնեական»):

«Աստված ասաց. *«Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանությամբ, նա թող իշխի ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի անասունների եւ երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա»: Եվ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծու պատկերով ստեղծեց նրան, արու եւ էգ ստեղծեց նրանց: Աստված օրհնեց նրանց ու ասաց. «Աճեցեք, բազմացեք, լցրեք երկիրը, տիրեցեք դրան, իշխեցեք ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի բոլոր անասունների ու երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա» (Ծննդ. Ա 26–28): «Սա մարդկանց ազգաբանության այն օրերի պատմությունն է, երբ Աստված ստեղծեց Ադամին: Ըստ Աստծու պատկերի ստեղծեց նրան, արու եւ էգ ստեղծեց նրանց, օրհնեց եւ ադամ, այսինքն՝ մարդ անվանեց նրանց այն օրը, երբ ստեղծեց նրանց» (Ծննդ. Ե 1–2)*.

Համաձայն Սուրբ Գրքի՝ ընտանիքի առաջին օրինակը կամ նախօրինակը տեսնում ենք հենց դրախտում. *«...Տեր Աստված իր ստեղծած մարդուն տեղավորեց բերկրության դրախտում, որպեսզի սա մշակի ու պահպանի այն... Այդ իսկ պատճառով տղամարդը, թողնելով իր հորն ու մորը, պետք է միանա իր կնոջը... Պիտի անչափ բազմացնեմ քո ցավերն ու քո հառաչանքները: Ցավերով երեխաներ պիտի ծնես, քո ամուսնուն պիտի ենթարկվես, եւ նա պիտի իշխի քեզ վրա»*: Այսու՝ Աստվածաշնչի հենց առաջին գրքից բավական առարկայական կերպով երեւան է գալիս ընտանիքի մի ողջ համապատկեր՝ հոր եւ մոր, տղամարդու եւ կնոջ, ինչպես նաեւ երեխաների մասին ծանուցումներով: Ըստ որում՝ նկատելի են կենսական ու աշխատանքային այնպիսի բնութագրական մանրամասներ, մասնավորաբար՝ մշակելն ու պահպանելը, կնոջը միանալու համար հորն ու մորը թողնելը, ամուսնուն ենթարկվելը, հառաչանքներն ու ցավերով երեխաներ ունենալը, ինչպիսիք անմերժելիորեն վերաբերում են մարդկությանն ու ընտանիքին ցայսօր *(տես, Ծննդ. Ա 28, Բ 15, 21, 24, Գ 16)*: Ընտանիքը Աստծո օրհնությամբ՝ երկուսի՝ տղամարդու եւ կնոջ ազատ կամքով ստեղծված ինքնավար միությունն է՝ աստիճանակարգության, սերնդագործության եւ դաստիարակության վեմի վրա, ինչպես կարդում ենք Աստվածաշնչում. *«...Դուք չե՞ք կարդացել, թե նա, ով սկզբից ստեղծեց, արու եւ էգ արեց նրանց... երկուսը մեկ մարմին պիտի լինեն: Ապա ուրեմն՝ ոչ թե երկու, այլ մեկ մարմին են: Արդ, ինչ որ Աստված միացրեց, մարդը թող չբաժանի» (Մատթ.ԺԹ 4 6, հմմտ. Մարկ. Ժ1–12)*:

Շարունակությունը՝ էջ 6

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈԶԵՌՆԻ

Հայոց տոմարագիտության պատմության մեջ շատ կարեւոր տեղ ունի Հովհաննես Կոզեռնը: Վերջինս Ժ–ԺԱ դդ. անվանի վարդապետ է, որի ծննդյան եւ մահվան թվականները հայտնի չեն: Հ. Քյուրտյանը նշում է, որ չնայած իր ունեցած մեծ համբավին՝ կենսագրական շատ քիչ տեղեկություններ են հայտնի նրա մասին *(տես Քիւրտեան Յ., Յովհաննէս վարդապետ Կոզեռն, Հանդէս ամսօրեայ, 1967, Ա, էջ 1)*: Մինչեւ ներկայացնելը, թե ինչ սկզբնաղբյուրներում եւ ինչ առիթներով է հիշատակվում անվանի վարդապետի անունը, նշենք նրա բավականին հետաքրքիր մականվան՝ «կոզեռն» բառի բացատրությունները: Այսպես՝ Կոզեռն մականվան նշանակությունը Քյուրտյանի համար անհասկանալի է մնում, իսկ ըստ Հրաչյա Աճառյանի «Հայերենի արմատական բառարանի»՝ այն նշանակում է «մանուկ», «երեխա» *(տես Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. Բ, Եր., 1973, էջ 613)*: Իսկ Ղեւոնդ Ալիշանն իր «Հայապատում» աշխատության մեջ Կոզեռն մականունը բացատրում է «ուղտի ձագ» *(տես Ղեւոնդ Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 89)*: Բառի նմանատիպ բացատրությանն ենք հանդիպում նաեւ «Գրաբարի բառարանում» *(տես Ղազարեան Ռ., Գրաբարի բառարան, Եր., 2000, հ. Ա, էջ 664)* եւ Է. Աղայանի կազմած «Արդի հայերենի բացատրական բառարանում» (*տես Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, հ. Ա, էջ 745)*:

Տոմարագետի մասին հիշատակություններ կան Արիստակես Լաստիվերցու (ԺԱ դար) «Պատմութիւն», Մատթեոս Ուռհայեցու (ԺԱ–ԺԲ դարեր) եւ Սամուել Անեցու (ԺԲ դար) «Ժամանակագրութիւն» աշխատություններում, Սմբատ Սպարապետի (ԺԳ դար) «Դատաստանագիրք» ժողովածուում:

ա) Հովհաննես Կոզեռնի վերաբերյալ առաջին հիշատակությանը հանդիպում ենք Արիստակես Լաստիվերցու «Պատմութիւն» աշխատության մեջ, որտեղ մասնավորապես կարդում ենք. «Եւ Յովհաննէս ի նոյն գաւառէ, զոր վերադիր անուամբ Կոզեռն կոչէին, որ զհաւատոյ գիրսն գրեաց» *(տես «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերցւոյ», աշխ.՝ Կ. Ն. Յուզբաշյանի, Եր., 1963, էջ 26)*:

Անվանի վարդապետի մասին հաջորդ հիշատակումները գտնվում են Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» մեջ: Եվ այդ հիշատակումները կատարվում են ոչ թե մեկ, այլ մի քանի առիթներով:

բ) Մատթեոս Ուռհայեցու գործում Կոզեռնի անվան վերաբերյալ առաջին հիշատակությունը կապված է Բյուզանդիայի Բարսեղ (Վասիլ) կայսեր պահանջով «Ծռազատկի մեկնություն» գրելու հետ *(տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 28–29)*:

գ) Հովհաննեսի վերաբերյալ մյուս տեղեկությունը վերաբերում է 1021–1022 թթ. Պետրոս Գետադարձ (1019–1058 թթ.) կաթողիկոսի հետ Տրապիզոնում ջրօրհնեքի արարողություն կատարելուն *(տես Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 33)*:

դ) Հաջորդ ակնարկը կապված է 1030 եւ 1036–37 թթ. տեղի ունեցած արեւի խավարման հետ *(տես նույն տեղում, էջ 34–35, 44–45)*:

ե) Հովհաննես Կոզեռնի անունը վկայված ենք գտնում նաեւ Սմբատ Սպարապետի «Տարեգրքում» *(տես Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 25)*:

զ) Հովհաննես Կոզեռնի մասին հիշատակություն գտել ենք նաեւ Սամուել Անեցու «Ժամանակագրություն» աշխատության մեջ *(տես Սամուել Անեցի եւ շարունակողներ, Ժամանակագրություն, աշխ.՝ Կ. Մաթեւոսյանի, Եր., 2014, էջ 184)*:



Մատենագրական վկայություններն օգնում են ճանաչելու ոչ միայն Հովհաննես Կոզեռնին՝ որպես տոմարագետի, այլ նաեւ որպես բարձրապատիվ անձի եւ իր ժամանակաշրջանում հավասարը չունեցող գիտնականի: Ուրեմն, եթե խոսենք Ուռհայեցու հիշատակությունների վերաբերյալ, դրանցից առաջինը, փաստորեն, վերաբերում է «Ծռազատկի բացատրություն» գրելուն: Ըստ նշյալ աշխատության՝ հայոց 455 թ., այսինքն՝ 1006–1007 թթ., Կ. Պոլսում մեծ հուզում տեղի ունեցավ, որովհետեւ հույները շփոթեցին Զատկի օրը եւ չնշեցին Հարության տոնը: Հույն վարդապետները նենգաբար ընդունեցին Իրիոնի անստույգ եւ պատիր տոմարը՝ Զատկի օրը տեղափոխելով 8 օր առաջ՝ Ծաղկազարդի օրը: Վասիլ կայսրը, չբավարարվելով հունաց իմաստունների տված պատասխաններով, որոնք նրան գցում էին մոլորության մեջ, ուզեց իմանալ հայոց վարդապետների խոսքը, որոնց մասին նախկինում շատ էր լսել: Նա անվանաբար գիտեր Հովսեփ Ընծայեցուն, ինչպես նաեւ Հովհաննես Կոզեռնին: Կայսրը խնդրում է Հովհաննեսին, որ իր մոտ՝ Պոլիս, ուղարկի վարդապետներին, սակայն նրանք չեն համաձայնում գնալ: Դրա փոխարեն Կոզեռնը գրում է «Ծռազատկի բացատրությունը» եւ ուղարկում է կայսրին:

➥՝ *էջ 5*

Գաղափարական հարցադրումները Ղազարոս Աղայանի «ԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՆՎԵԼ» վեպում

Ղազարոս Աղայանի գեղարվեստական արձակի մեջ ուրույն տեղ ունի վիպագրությունը: Այն հայ նոր գրականության համապատկերում ուշագրավ է իր գաղափարագեղարվեստական արժանիքներով, ժամանակաշրջանի հայ գյուղական իրականության կենդանի պատկերներով: Աղայանի վեպերում, որոնք 19-րդ դարի երկրորդ կեսում ժանրի առումով առաջիններից էին մեր գրականության մեջ, արտացոլված են խորաթափանց մտածողի աշխարհընկալումը, հայկական իրականությունը՝ իր նահապետական բարքերով, դրանցում տեղ գտած կարեւոր խնդիրների արծարծումներով: Այդ վիպագրությանը հատուկ է կյանքի ընդգրկուն պատկերումը՝ ընտանեկան հարաբերություններ, ազգային հոգեկերտվածք, միջավայր: Ժամանակի կյանքի հագեցած նկարագրություններն ու մտայնություններն ամբողջական են դարձնում գրողի ասելիքը: Գյուղական կյանքի պատկերներում Աղայանը ներկայացրել է հարազատ եզերքի մարդու հոգսաշատ կյանքը, ավանդական գյուղաշխարհի նահապետական տարերքը:

«Արություն եւ Մանվել» (1866) վեպի հայտնությունն արեւելահայ արձակում ունեցավ *նախաշավղային դեր*. հետագայում՝ 20-րդ դարի 20-ականների վերջին եւ հաջորդ տասնամյակին, խորհրդահայ գեղարվեստական արձակի ամենաբազմազան դրսեւորումների մեջ հատկապես ընդգծվեց ինքնակենսագրական վեպ-վիպակի ժանրը: Այն մի կողմից ներառեց դարաշրջանի հայոց ողբերգական ճակատագիրը, մյուս կողմից՝ սարսափների միջով անցած գրողների ինքնարտահայտման անձնական պահանջներն ու վերաիմաստավորումները: «Գրական ընթացքի մեջ էին մարդիկ, որոնց կյանքը սերտորեն կապված էր ժողովրդի պատմության քաղաքական-սոցիալական մի շարք երեւույթների հետ, ավելի ճիշտ՝ մի կյանքի մեջ արտացոլված էր նաեւ ժողովրդի պատմական բախտը: Սերունդների բախտի տարեգրություն, այսպես կարելի է որակել այդ վեպերի բովանդակությունը: Նրանցից յուրաքանչյուրը բերում է ուրույն եւ ինքնատիպ աշխարհի, իր ապրած ու տեսած Հայաստանի, իր սերնդի դառն ճակատագրի պատկերը, որի շնորհիվ էլ անհատի կյանքի պատմությունը ձեռք է բերում նաեւ հասարակական հետաքրքրություն»,– նկատում է ակադ. Հր. Թամրազյանը: Մեկը մյուսի հետեւից լույս են տեսնում Գուրգեն Մահարու («Մանկություն», 1928, «Պատանեկություն», 1929–1930), Վահան Թոթովենցի («Կյանքը հին Հռովմեական ճանապարհի վրա», 1930), Զապել Եսայանի («Սիլիհտարի պարտեզները») եւ Ստեփան Զորյանի («Մի կյանքի պատմություն», I–1934, II–1939) ստեղծագործությունները, որոնք որակական նոր ընթացք հաղորդեցին ժանրի զարգացմանը:



Աղայանն իր անդրանիկ վեպը կոչեց ազգային՝ հենվելով նալբանդյանական բնորոշման վրա, եւ շարունակեց կիրառել աբովյանական սկզբունքները: «Արություն եւ Մանվելը» գաղափարական պայքարի նոր հղացք է՝ ուղղված անցյալի տգիտության դեմ. այն առաջավոր հայացքների, լուսավոր գաղափարների, նոր սերնդի հոգեմտավոր զարգացմանը միտված ստեղծագործություն է՝ ուղենշային արժեք ունեցող զանազան գաղափարների արծարծումներով: Եվ «Արություն եւ Մանվել» վեպի, եւ «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» հուշագրության հերոսը ինքնակերպավորված հեղինակն է: Հերոսի ընտրությունը դժվարության առաջ է կանգնեցնում վիպագրին, եւ ավելի ուշ նա այդ մասին գրում է. «Արություն եւ Մանվել» վեպը իմ ինքնասիրության արդյունքն է: Ինձ հարկավոր էր ժամանակակից մի հերոս. ծանոթներիս մեջ ինձանից լավը չգտա: Քան թե պիտի երեւակայեի եւ խելքիս զոռ տայի, ավելի համարեցի՝ ստուգապատում լինելու համար, բուն իրողությունը, իմ իսկապես տեսածն ու լսածը վիպական ձեւի տակ ձգել» *(Հր. Թամրազյան, Սովետահայ գրականության պատմություն, ԵՊՀ հրատ., Եր., 1980, էջ 419)*: Վեպի գրությունը կապված է Պետերբուրգում հայ երիտասարդների ստեղծած ուսանողական ժողովների քննարկումների հետ, երբ հերթական ընթերցվելիք գրական երկը դարձավ «Արություն եւ Մանվելը»: Հերոսի կյանքի օրինակով Աղայանը ներկայացնում է 19-րդ դարի 50–60-ականների հայ իրականության պատկերը, բարքերը, մտածողությունը, Արության հոգեմտավոր զարգացման ընթացքը:

Վիպական պատումը հարուստ է գյուղական իրականության մեջ տեղ գտած դիպվածներով: Առհասարակ ինքնակենսագրական վեպի ժանրին բնորոշ է մանկության թեմայի արծարծումը: Աղայանի համար այս թեման դարձավ վեպի առանցքային նշանակություն ունեցող մասերից մեկը: Նրա մանկական հիշողությունները պարուրված են անսահման հուսահատությամբ, հոր կողմից մերժված լինելու ծանր գիտակցմամբ:

Որքան էլ գրողը փորձում է հերքել Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի. Ողբ հայրենասերի» վեպի հետ ունեցած նմանությունը, այնուամենայնիվ, վեպը կրում է աբովյանական ավանդների ազդեցությունը, եւ Աղայանը երբեմն կրկնում է իր անմիջական նախորդին: Վիպագիրը բոլոր դեպքերում Աբովյանի գաղափարների արծարծողն էր նոր հանգամանքներում եւ նոր իրադրության մեջ: Եթե Աբովյանը ներկայացնում է Բարեկենդանի տոնակատարության պատկերը, ապա Աղայանը վերցրել է կրոնական այլ ծես, որը նրան հնարավորություն է ընձեռել բուն հայկական միջավայրում կերտել իր վիպական հերոսներին:

Ակնհայտ են երկու գրողների նկարագրությունների, ժողովրդական մտածողությամբ գեղարվեստական պատկերների նմանությունները, ընթերցող-տեքստ պատումային առնչակցությունները:

Շարունակությունը՝ էջ 6

ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

՝ էջ 4

Այստեղ վարդապետը, հիմնվելով Անանիա Շիրակացու մեկնությունների վրա *(տես Անանիա Շիրակացի, Մատենագրություն, թարգմանությունը, առաջաբանը եւ ծանոթագրությունները՝ Ա. Աբրահամյանի եւ Գ. Պետրոսյանի, Եր., 1979, էջ 160–173)*, որը կատարել էր իր «Զատկի ճառում», հիմնավորում է Հայոց Եկեղեցու ուղղափառ դիրքորոշումը՝ մերժելով Իրիոնի զատկացուցակը (*տես Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրություն, Եր., 1973, էջ 28–29)*: Նախ հարկ ենք համարում նշել, որ Նիկեայի 325 թ. առաջին տիեզերաժողովում Կոստանդին կայսրը հաստատել է, թե «Պետք չէ այսուհետեւ Զատիկը տոնել տիրասպան հրեաների հետ խառը» *(տես Անանիա Շիրակացի, Մատենագրություն, էջ 165)*: Կայսրը հրամայում է օգտագործել այն տասնիններյակը, որը կարգված է եղել նախնիների կողմից: Թեպետ կայսեր հրամանը գործադրվեց, բայց բոլոր վայրերում չէ, որ կարելի էր այն միօրինակ կիրառել: Սրանից հետո է, որ Կոստանդիանոսի որդի Կոստանդինի ժամանակ Մագնոս եպիսկոպոսի եղբայր Անդրեասը կարգեց 200-ամյա իր զատկացուցակը, որն անթերի չէր *(տես Անանիա Շիրակացի, Մատենագրություն, նույն տեղում)*: Այստեղ անպայման է նշել, որ հայկական տոմարի մեկնության համար կարեւոր դեր ունի «Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» աշխատությունը: Նա (Անանիա Շիրակացին («Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» բնագրի հեղինակության հարցը քննարկել ենք մեր նախորդ աշխատանքում) առաջինն էր, որը տոմարական նուրբ հաշվումների օգնությամբ քրիստոնեական ազգերի տոմարների միջեւ ընդհանրություն ստեղծեց: «Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» աշխատության հարցուպատասխանիքի կեսը վերաբերում է հայկական տոմարին (ընդհանուր առմամբ պահպանվել է 28 հարցուպատասխանիք) եւ կապված է Հայոց մեծ թվականի հետ: Ինչպես նշում է Ջ. Էյնաթյանը՝ ըստ հայկական ձեռագրերի՝ Անդրեասի 200-ամյա զատկացուցակի ավարտից հետո քրիստոնյա ժողովուրդներն ինը տարի շփոթում էին Զատիկը եւ դրա հետ կապված եկեղեցական տոները *(տես Էյնաթյան Ջ., «Պատճէն տոմարի հայոց մեծացը» եւ նրա մի քանի մեկնությունները, Լրաբեր, Ե., 1976, էջ 80)*: Անդրեասի կազմած տոմարը վերջացավ Հուստինիանոս կայսեր տարիներին, եւ նոր տոմար կազմելու խնդիրը դարձավ կարեւորագույն հարց, որովհետեւ գիտնականները հասկանում էին, որ չէր ստացվի իննեւտասներյակ բոլորակը ճշտությամբ համապատասխանեցնել կազմված 95 տարիների պարբերաշրջանների հետ: Թվում էր, թե այդ կարգավորումն անհնարին էր, սակայն Աղեքսանդրիայում կազմվեց 532-ամյա պարբերաշրջան, որն անթերի ցույց էր տալիս Զատկի տասնչորսյակ օրերը: Այս բոլորակի կազմողների ղեկավարն էր Եաս Աղեքսանդրացին, կազմողների թվում էին նաեւ Փենհեզ Տիբեթացին, ասորի Գաբրիելը, արաբ Հովհանը, մակեդոնացի Սերգին, հույն Եվլոգին, եթովպացի Աբիդենը, հռոմեացի Գիգանը եւ այլք: Ժողովին մասնակցում էր 36 գիտնական *(տես Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Եր., 1979, էջ 165–166)*: Այս զատկացուցակը ստեղծվեց 562 թվականին, որը լուսնի 19-ամյա պարբերաշրջանի եւ 28-ամյա՝ արեւի փոքր շրջանի կամ անշարժ տոմարի 28-ամյա (7x4) շաբաթական շարքի արտադրյալի թիվն էր: Հարկ է նաեւ նշել, որ այս զատկացուցակն աստիճանաբար տարածում գտավ ողջ քրիստոնյա աշխարհում: Վերջինս հենք հանդիսացավ ոչ միայն քրիստոնեական-տոնական տարվա համար, այլ նաեւ վերածվեց թվականության համակարգի: Այս զատկացուցակը նաեւ հիմք հանդիսացավ թվականության նոր համակարգերի առաջացման, այդ թվում եւ հայկականի *(տես Վարդանյան Ռ., «Պատճէն տոմարի հայոց»-ի խմբագրությունների ժամանակի որոշումը (6–18-րդ դդ.), Եր., 2007, էջ 7)*: Եվ միայն Եաս Աղեքսանդրացու ղեկավարած ժողովը լուծեց եւ կարգավորեց վերոնշյալ շփոթությունը *(տես Էյնաթյան Ջ., նույն տեղում, էջ 81)*: Այս ժամանակ է, որ հանդես է գալիս Իրիոն վարդապետ Կոստանդնուպոլսեցին: Հայտնի է, որ վերջինս չարությամբ էր լցված Աղեքսանդրիայում հավաքված գիտնականների հանդեպ, որովհետեւ իրեն չէին հրավիրել մասնակցելու ժողովին: Եվ հիրավի, հակառակ ճշմարտությանը, նա կազմում է նորաձեւ ժամանակագրություն: Նա հիմք է վերցնում փարմութ ամսի տասը եւ դնում բոլորակի գլուխը՝ լրումով եւ անվերադրությամբ: Իրեոնը մեղադրում է գիտնականներին, որոնք հետեւել են եբրայական տոմարին, իսկ ինքն առաջնորդվել է եբրայական տոմարով՝ ցույց տալով, որ Աղեքսանդրիայի գիտնականներն այնքան տգետ են, որ իրենք իրենց տոմարը չգիտեն եւ ցանկանում են տոմար կազմել ուրիշի համար (տես Անանիա Շիրակացի, Մատենագրություն, նույն տեղում):

Շարունակելի

ԳՈՌ ԳԱԼՍՏՅԱՆ

Ընտանիքն արարչագործության համատեքստում. ընտանիքն Աստծո դրախտում

Սկիզբը՝ էջ 4

Այս տրամաբանությունը հիմնական իմաստով պահպանվում է Հին Կտակարանում *(Գ Թագ. ԺԱ 2, 15, Երկր. Օր. Դ 4, Հեսու ԻԳ 18–22)*, եւ անուրանալի է դրա ուղիղ փոխկապակցվածությունը Նոր Կտակարանի հետ *(Մատթ. Իե 1, Մարկ. Բ 19)*: *«Եթե չդառնաք ու չլինեք մանուկների պես, երկնքի արքայությունը չեք մտնի... Ահա ես դռան առաջ կանգնած եմ եւ թակում եմ. եթե մեկը լսի իմ ձայնը եւ դուռը բացի՝ կմտնեմ նրա մոտ» (Մատթ. ԺԸ 3, ԺԹ 9, Հայտն. Գ 20)*: Խրիմյան Հայրիկը, ընտանիքը համեմատելով եկեղեցու հետ եւ բնորոշելով որպես խորան, համարելով կենսականության աղբյուր եւ կարեւորելով բարոյական դաստիարակությունը, իրավացիորեն ընտանիքը նմանեցնում է թագավորության, որտեղ առաջնորդողը սերն է, իսկ ոգեւորության աղբյուրը՝ ծնողների կենդանի օրինակը:

«Տուն եւ ընտանիք մի փոքրիկ թագաւորութեան երկիր ու սահման է. որոյ նահապետական աթոռին վերայ կընստին ծնողք. հայր իբրեւ թագաւոր, եւ մայրն իբրեւ թագուհի. եւ կը կառավարեն հպատակ ընտանիքը: Սոյն ընտանեկան պալատին ու թագաւորութեան մէջ ոչ ոստիկան կայ, ոչ սուր, ոչ բռնութիւն, ոչ գաւազան, այլ ամենուն տեղ հայրական սէր եւ մայրական գորովն է. դաստիարակ եւ խրատ՝ ծնողաց կենդանի օրինակն է: Այս օրինակը այնչափ բարի ու տպաւորիչ է, որ գիտես, թէ լուսաբուեստին պէս թափանցիկ կերպով ծնողաց պատկերը նոյնատիպ կը հանէ իւր զաւակաց վերայ, եւ զաւակները, այդ սկզբնական տիպարն առնելով, կը մտնեն ժողովուրդին եւ ընկերութեան մէջ:

Ժողովուրդը եւ ազգերը միայն հացով չեն ապրիր. թագաւորութեամբ եւ ազատութեամբ չեն բարձրանար, այլ առաւել բարոյական կեանքով. եւ այդ կենսական կեանք տուողը ընտանիքն է... Ժողովուրդը եթէ կը յառաջադիմէ՝ իւր առաջին քայլը ընտանեաց սրահէն կառնու. եթէ կը լուսաւորի, իւր լոյսը ընտանեկան ճրագէն է. եթէ կը միանայ, իւր ոգին եւ կապն ընտանիքն է. եթէ կը զօրանայ իւր ուժ եւ բազուկն ընտանիքն է...եթէ դրախտի գետերը կը վազեն իւր հրապարակը՝ աղբիւրը դրախտի ընտանիքն է... եթէ երկրէս յետոյ երկինք եւս ժառանգելկուզէ՝ պահելով իւր հայրենի կրօն, հաւատ եւ եկեղեցին, այո՛ այդ սուրբ աւանդները անեղծ անկորուստ պահելու խորանն ընտանիքն է: Զի այդ գանձը եւ Աւետարանի անգիւտ մարգարիտը աշխարհիս շահավաճառութեան հրապարակին մէջ, կառավարութեանց դահլիճներու մէջ, գիտութեանց ճեմարանաց մէջ անկորուստ չեն պահուիր, այլ միայն դորա հաւատարիմ աւանդապահ ընտանիքն է...» (Խրիմեան Մկրտիչ, «Դրախտի ընտանիք»):

«Հայոց Հայրիկը», քաջ գիտակցելով քրիստոնեական կյանքի համամարդկային ու ազգային, հոգեւոր-բարոյական առավելությունները, համադրելով երկինքն ու երկիրը եկեղեցու եւ «հայրենի կրոնի» հետ, վկայակոչում է Ս. Գրքի նահապետական տների փորձառությունն ու հատկորոշում Աստծուց տրված զանազան շնորհների եւ գիտության օգտակարությունը՝ միաժամանակ զատորոշելով ընտանիքի եւ մասնավորապես նահապետական կամ ավանդապահ ընտանիքի անկորնչելի վաստակը. «Նահապետական ընտանեաց մէջ շատ նշանաւոր էր ծնողաց յարգանք ու որդւոց պատկառանք. երանի՜ թէ այս վսեմ առաքինութեան օրինակը եւ յիշատակը Յաբեթի տան անցեալ եւ ներկայ որդիներ անմոռաց պահէին միշտ ընկերական կեանքին մէջ, զոր չի մոռնար Մովսէս պատմել Սուրբ Գրոց կարգին հետը. ցոյց տալով, թէ քանի պատկառանաց ու համեստութեան շնորհ կը փայլէր Նահապետաց ընտանեկան կեանքին մէջ» (Խրիմեան Մկրտիչ, «Դրախտի ընտանիք»):

Խոսուն փաստերով ու փաստարկներով բնորոշվում եւ ուղեգծվում է մի կողմից՝ ընտանիքի եկեղեցական բնույթը, մյուս կողմից՝ տան, ցեղի, գերդաստանի բովանդակությունը: Միանգամայն ուշադրության արժանի է ընտանիքի՝ որպես սրբազան ավանդության կրողի ու փոխանցողի գործառույթը, ինչը մեկ անգամ չէ, որ բավական ինքնահատուկ կերպով սահմանում է Հայ Եկեղեցու նվիրյալ զավակ Արշակ Տեր-Միքելյանը. *«Հայաստանյայց Ս. Եկեղեցին թէ՛ օրինութեամբ եւ թէ՛ օրինակով հաստատում է սիրո արտաքին իրականացումը կամ ընտանիքը, որ ներկայացնում է յուր մէջ մարդկային սիրո ամենասերտ կապակցությունը: Սակայն ընտանիքը միմիայն յուր գոյությամբ չէ ծառայում սիրո նպատակին, այլեւ յուր գործունեությամբ: Ինչպես որ Եկեղեցին ընտանիքով է պատկերացնում սիրո արտաքին իրականացումը, այնպես էլ ընտանիքի միջոցով է ընդարձակվում սիրո շրջանը»* (Արշակ Տեր-Միքելյան, «Քրիստոնեական»):

Բոլսվերտ Սխելտե Ադամս (1581–1659), «Սուրբ ընտանիք», ՀԱՊ

Ընտանիքը նախեւառաջ անձնական, ապա ընկերային ու համամարդկային այն վայրն է, որտեղ երջանկանալու եւ երջանկացնելու գործառույթը (կամ դիպուկ խոսքով՝ նախախնամական առաքելությունը) ամեն բանից առաջ խարսխված է սիրո եւ վստահության, խոնարհության ու Արարչին փոխադարձ ծառայություն մատուցելու հիման վրա: Այս մասին է առաքյալի հույժ նախանձախնդիր ու նվիրական անդրադարձը. *«Ինչ որ կարելի է իմանալ Աստծու մասին, հայտնված է նրանց, քանզի Աստված ինքը հայտնեց այն նրանց... Որդիներ, հնազանդ եղեք ձեր ծնողներին ի Տեր, որովհետեւ դա է ճիշտը: Պատվի՛ր քո հորն ու մորը,– որ առաջին պատվիրանն է՝ տրված խոստումով,– որպեսզի լավ լինի քեզ համար, եւ երկար կյանք ունենաս երկրի վրա: Հայրե՛ր, մի՛ զայրացրեք ձեր որդիներին, այլ մեծացրե՛ք նրանց Տիրոջ խրատով եւ ուսումով» (Հռոմ. Ա 18–23, Եփես. Զ 1–4)*: Տեղին ենք համարում հիշատակել նաեւ Ընդհանրական Եկեղեցու նշանավոր հայր ս. Հովհան Ոսկեբերանի հայտնի միտքը. *«Աստված, ստեղծելով մարդուն, նրան նվիրել է բնական օրենքը»*: Բնական օրենքը, ըստ էության, պայմանավորված է ազատ կամքով, բխում է ընտրության հնարավորությունից եւ ենթադրում է վերը նշվածը: Ս. Գրիգոր Աստվածաբանի վկայությամբ՝ Աստծո մասն է, որ մարդուն իսկապես մարդ է դարձնում՝ փոխանցելով արարչագործելու շնորհը. *«Ադամը պառկեց իր կին Եվայի հետ, սա հղիացավ, ծնեց Կայենին ու ասաց. «Մարդ ծնեցի Աստծու զորությամբ»: Դրանից հետո նա ծնեց նրա եղբայր Աբելին... Սեթին ծնելուց հետո Ադամն ապրեց եւս յոթը հարյուր տարի եւ ծնեց ուստերեր ու դուստրեր» (Ծննդ. Դ 1, Ե 3–4)*:

Ընտանիքը հավասարապես սիրո եւ հավատքի տաճար է, որտեղից մարդ ներգրավվում է հանրությանը, «առաջի՛ն եկեղեցին» եւ այն լուսառատ միջավայրը, որտեղ երաշխավորվում են թե՛ մարդկության ապագան ու հոգեւոր անվտանգությունը, թե՛ դրա շարունակականությունը *(տե՛ս Գործք. Բ 42, Գաղատ. Ե 22–23)*: Այլ խոսքով՝ ընտանիքն Աստծո «ռազմավարությունն է» կամ այն գործիքակազմը, որը հնարավորություն է ընձեռում ճանաչելու եւ պահպանելու Աստծո պատվիրանները, *«որովհետեւ մարդն է գլուխը կնոջ, ինչպես որ Քրիստոս գլուխն է եկեղեցու. եւ ինքն է Փրկիչը այդ մարմնի:*

Շարունակությունը՝ էջ 7

Գաղափարական հարցադրումները Ղազարոս Աղայանի «ԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՆՎԵԼ» վեպում



Սկիզբը՝ էջ 5

Աղայանը, ինչ խոսք, հրաշալի է պատկերացնում իր եւ Աբովյանի վեպի տարբերությունները, բայց եւ այնպես ընդհանրությունները ներկայացնում է որոշ վերապահություններով: «Ոմանք այն միտքը տարածեցին ընթերցող հասարակության մեջ,– գրում է նա,– որ իբրեւ թե իմ աշխատությունը մի հետեւություն է անմահ Աբովյանցի վեպի: Այդպես չէ: Նրա «Վերք Հայաստանին» մի ողբ է, ողբ հայրենիքի թշվառության վրա, ողբ հայրենասերի, բխած մի զգայուն սրտից, զարգացած ուղեղից: «Արություն եւ Մանվելը» բերում է մի բոլորովին նոր ուղղություն» (հ. 4, էջ 395): Իր ժխտման մեջ Աղայանը ենթագիտակցորեն հաստատում է ակնհայտ նմանությունը: Իրապես, վեպը հին ու նոր գաղափարների, ավանդականի եւ արդիականի, խավարի ու լուսավորության շարունակական պայքարի եւ առաջընթացի գաղափարական հաղթանակի ձգտումն է: Արությունի շուրթերից հնչում է նույն աբովյանական պատգամը. «...մեր նոր սերնդի աչքը կբացվի, կտեսնի, որ հնից էլ օգուտ չկա, գրաբարը ետ-ետ կքաշվի, իր տեղն աշխարհաբարին կտա, էն ժամանակ էդպես գրքերն էլ կստանան իրենց վայելուչ հարգն ու պատիվը» (հ. 4, էջ 46): Հերոսների դիմելաձեւում ակնհայտ են Աբովյանի ոճից եկող՝ «քու հոգուն մատաղ, ես քու խաթրը կկոտրե՞մ» նմանակումները: Ն. Աղբալյանն այս վեպի մասին գրել է. «Աղայանն «Արություն եւ Մանվել»-ով թոթափում է իր վրայից իդեալականության մնացորդները եւ պինդ խրվում է իրականության մեջ: Դրանով նա բռնում է մի պատվավոր տեղ մեր վիպագրության զարգացման պատմության մեջ: Նրա այդ եւ հետագա գրվածներում այլեւս չկան իդեալական մարդիկ. բոլորը իրական են, սովորական, սոսկական: Այստեղ գյուղացին հավատարմությամբ է վերարտադրված» *(Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հատոր 1, Եր., 1955, էջ 20: Երկերի սույն ժողովածուից կատարվող մեջբերումների պարագայում հետայսու կնշվեն միայն հատորն ու էջը)*:

Արցախի Խաչեն գավառից Բոլնիսի ձորում հաստատված գյուղի բնակչության միակ գրագիտուհին Մանիշակն էր, որը Արությունին գրաճանաչ դարձրեց, իսկ հետո տեր Պետրոսը դարձավ նրա հաջորդ ուսուցիչը: Արությունն անվերապահորեն ընդունում էր նրա ասածները, թեպետ քահանան չէր կարդացել հայոց պատմիչների գործերը: Պատկերվող միջավայրն ու ժամանակաշրջանը կրթության համար այնքան էլ բարենպաստ չէին. «Ուսումնատվության այդ բարբարոս եւ խավար ժամանակը ոչ մի երեխա գիր չէր սովորում, նրա խելքումը չէր մտնում, նրա խելքը հակառակում էր, թեեւ բնազդմամբ, որ այդ ձեւով սովորել անհնարին է» (հ. 4, էջ 14): Կրթության համար սահմանափակ ժամանակներ էին. նախապաշարմունքների գերակայությունը, ժողովրդի կյանքում խավարի եւ տգիտության արմատներն այնքան խոր էին, որ նրանք առարկաներին աներեւույթ, գերբնական հատկություններ էին վերագրում ու հավատում դրանց զորությանը: Աղայանը քննական հայացքով է դիտարկում քրիստոնեական հավատքի եւ ծայրահեղության հասնող սնոտիապաշտության դրսեւորումները, որ կապված էին ժողովրդի ավանդական հավատալիքների հետ: Գյուղական կենցաղում ժողովրդի կողմից կարեւորություն էին ձեռք բերել «Գիր հոպոպի», «Գիր հավախոսի», «Գիր չբերք կնոջ» սնոտիապաշտական բովանդակություն ունեցող գրքերը: Դրանց հետ կապված՝ նշվում է Ներսես կաթողիկոսի վերաբերմունքը, որն արգելել էր այդ գրքերի կիրառումը: Դրանք հավաքող վարդապետները, այնուամենայնիվ, հավատում էին գրքերի հրաշք զորությանը: Ժողովրդի կյանքում տեղ գտած սնոտիապաշտության, մոլորությունների, նախապաշարումների չարիքի ակունքը հեղինակը տեսնում էր նրա կարծրացած մտածելակերպի, հետամնացության եւ կրթության պակասի մեջ. «...պետք է գիտենալ միայն, թե ինչպիսի զենքով պետք է պատերազմել տգիտության եւ խավարի դեմ եւ միանգամ ընդմիշտ համոզվելու է, որ այս դարում գործ դրած զենքը մյուս դարում կարելի չէ գործածել իբրեւ հնացած եւ անպետք» (հ. 4, էջ 9):

Շարունակելի

ԱՆՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ

ԼԵՎՈՆ Բ ՄԵԾԱԳՈՐԾԻ ԵԿԵՂԵՑԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1187 թվականին Կիլիկիայի հայոց իշխանապետության գլուխ կանգնեց Լեւոն Մեծագործը: Լեւոն Բ-ն երկիրն սկսել էր կառավարել 1185 թվից, երբ եղբայրը՝ Ռուբեն Գ-ն, դավադրության զոհ դառնալով, գերվել էր Անտիոքի դքսի կողմից: Նույն թվին Լեւոնը հետ մղեց Անտիոքի խաչակիրների հարձակումը՝ ձեռք բերելով ժողովրդի հարգանքն ու համակրանքը:

Լեւոնի կառավարման ժամանակ միջազգային հարաբերությունները բավականին բարդ էին: Մերձավոր Արեւելքում տեղի էին ունենում քաղաքական բարդ անցուդարձներ. Սալահ ադ-Դինը 1187 թվին գրավեց Երուսաղեմը եւ Պաղեստինի մեծ մասը, Հռոմի պապական աթոռն ակտիվացրեց իր գործունեությունը Արեւելքում, տեղի ունեցան երրորդ, չորրորդ եւ հինգերորդ խաչակրաց արշավանքները, Բյուզանդիան սկսեց թուլանալ՝ մանավանդ չորրորդ արշավանքից հետո, երբ խաչակիրները գրավեցին Կոստանդնուպոլիսը:

1185 թվին Անտիոքի խաչակիրներին հետ մղելուց հետո Լեւոնը 1187 թվին հետ մղեց թուրքմենների ներխուժումը Կիլիկիա: Իսկ 1188 թվին Սալահ ադ-Դինի զորքերը մտան Անտիոք, այդտեղից էլ Ամանոսի լեռնանցքով՝ Կիլիկիա: Սալահ ադ-Դինը պարտություն կրեց Կիլիկիայում: Դրանից հետո վերջինս խաչակրաց երրորդ արշավանքի խաչակիրների հետ առնչվեց ու դադարեցրեց Անտիոքի ու Կիլիկիայի դեմ հարձակումները *(տես Միքայելյան Գ., Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Եր., 2007, էջ 147)*:

Երրորդ խաչակրաց արշավանքն սկսվեց 1189 թվին եւ շարունակվեց մինչեւ 1192 թվականը *(տես Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները եւ հայերը, հ. Ա, Եր., 2005, էջ 10–11)*: Նպատակն էր Սալահ ադ-Դինի կողմից գրավված Երուսաղեմը հետ վերադարձնել: Արշավանքի հրամանատարներն էին Հռոմեական սրբազան կայսրության տիրակալ Ֆրիդրիխ Շիկամորուսը, Անգլիայի թագավոր Ռիչարդ Առյուծասիրտը եւ Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ Ա Օգոստոսը: Ռիչարդ եւ Ֆիլիպ թագավորների բանակը նավերով տեղափոխվեց Պաղեստին եւ պաշարեց Ակրան, իսկ Ֆրիդրիխ Շիկամորուսը մեծաթիվ բանակով ցամաքային ճանապարհով ուղեւորվեց Սուրբ Երկիր: Ֆրիդրիխ Շիկամորուսը լայն նպատակներ ուներ՝ իր իշխանությանը ենթարկել Մերձավոր Արեւելքի երկրները:

Լեւոն Բ-ն ձգտում էր չեզոքություն պահպանել երրորդ խաչակրաց արշավանքի շրջանում: 1189 թվականին Կղեմես Գ պապը նամակներով դիմում է հայոց կաթողիկոսին եւ իշխանապետին: Պապը հայերին ճանաչում է որպես «ի հաւատ կաթողիկէ հաստատեալ» *(տես Տեր-Ղեւոնդյան Վ., Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքականությունը XII դարի վերջին, Պատմաբանասիրական հանդես, № 1, 2010, էջ 116)*:

Նամակագրական կապը վերահաստատելու նպատակն այն էր, որ հայերն օգնեին խաչակիրներին: Երբ գերմանական զորքերը դժվարին իրավիճակում էին հայտնվել՝ պարենի եւ ջրի պակասի պատճառով, Ֆրիդրիխն օգնություն խնդրեց Լեւոնից եւ արշավանքին միանալու առաջարկ արեց: Լեւոն Մեծագործը, կայսրից նամակ ստանալով, Ներսես Լամբրոնացուն ուղարկեց Հռոմկլա՝ Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի մոտ *(տես Միքայելյան Գ., նշվ. աշխ., էջ 149)*: Գրիգոր կաթողիկոսը Ֆրիդրիխին տեղեկացրել էր իր՝ Մսիս (քաղաք դաշտային Կիլիկիայում) գալու մասին ու առաջարկել հանդիպել: Ֆրիդրիխն էլ կաթողիկոսին հայտնել էր, որ հետը բերում է արքայական թագ ու պատրաստվում է թագադրել նրան, ում կաթողիկոսն ասի: Լեւոնի դեսպանները Ֆրիդրիխի մոտ են եկել 1190 թվի հուլիսի 8-ին, իսկ 2 օր անց կայսրը խեղդամահ է եղել Սելեֆում (Կալիկադնոս): Ֆրիդրիխի փոխարեն բանակի գլուխ կանգնեց նրա որդի Ֆրիդրիխ Կրտսերը, որը Մամեստիայի եւ Տարսոնի վրայով անցավ Անտիոք, որտեղ էլ թաղեցին Ֆրիդրիխ Շիկամորուսին: Ապա գերմանացի խաչակիրները շարունակեցին իրենց ուղին ու գնացին միացան Ակրան պաշարող մյուս խաչակիրներին: Այստեղ մեռավ նաեւ Ֆրիդրիխ Կրտսերը *(տես Տեր-Ղեւոնդյան Վ., նշվ. աշխ., էջ 118)*:

Լեւոն Մեծագործի ժամանակաշրջանում կաթողիկոսական աթոռին իրար հաջորդել են չորս կաթողիկոս՝ Գրիգոր Դ Տղան (1173–1193), Գրիգոր Ե Քարավեժը (1193–1194), Գրիգոր Զ Ապիրատը (1194–1203) եւ Հովհաննես Զ Սսեցին (1203–1221): Լեւոն Մեծագործի իշխանապետության առաջին տարիներին կաթողիկոս էր Գրիգոր Դ Տղան, որը կաթողիկոսական աթոռին բազմած էր դեռեւս Մլեհ իշխանապետի շրջանից: Կաթողիկոսն ու Լեւոն իշխանը ջերմ հարաբերություններ են ունեցել: Լեւոնը վստահում էր Գրիգորին, դրա վկայությունն այն է, որ վերջինիս ուղարկել էր Ֆրիդրիխին դիմավորելու: Նշենք նաեւ, որ Գրիգորը կողմ էր Կաթոլիկ Եկեղեցու հետ մերձեցմանը՝ հույս ունենալով, որ կաթոլիկների օգնությամբ կիլիկյան իշխանապետությունը կվերածվի թագավորության:

Գրիգորն իր կյանքի վերջին տարիներին, ըստ որոշ աղբյուրների, ըմբոստացել է Լեւոն Բ-ի վարած քաղաքականության դեմ *(տես Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Եր., 2002 էջ 230)*: Կաթողիկոսը մահացավ 1193 թվի մայիսի 16-ին *(տես Օրմանյան Մ., Ազգապատում, էջմիածին, 2001, հ. Ա, սյուն 1746)*: Նրա աճյունն ամփոփվել է Դրազարկի վանքում, որը Ռուբինյան գահակալների դամբարանատեղին էր: Կաթողիկոսական գահին Գրիգոր Դ Տղային հաջորդել է Գրիգոր Ե Քարավեժը:

Քաղաքական դրդապատճառներով առաջացած Հայ-բյուզանդական եւ Հայ-լատին Եկեղեցիների միջեւ սկսված եւ շարունակվող բանակցությունները եկեղեցական միության նպատակով երկրում ստեղծեցին 2 հակադիր ուժեր՝ միութենասեր եւ միութենամերժ: Առաջինները հիմնականում կիլիկյան հայոց եկեղեցականներն էին, իսկ երկրորդները՝ արեւելյան կամ Մեծ Հայքի վարդապետները *(տես Պետրոսյան Ե., Հայ Եկեղեցու պատմություն. սկզբից մինչեւ 1441 թիվը, մաս Ա, էջմիածին, 1995, էջ 136)*: Վերջիններս դեմ չէին Եկեղեցիների միությանը եւ բարեկամական հարաբերություններին, սակայն դեմ էին հրաժարվել Հայ Եկեղեցու ծիսադավանաբանական ավանդույթներից:

Այս ժամանակաշրջանում լարվում են հարաբերություններն Անտիոքի իշխանապետության հետ: 1193 թվականի հոկտեմբերին Լեւոն Բ-ն, խնջույքի պատրվակով, Անտիոքի իշխան Բոհեմունդ Գ-ին հրավիրում է Պաղրաս եւ ձերբակալելով նրան՝ պահանջում է իրեն հանձնել Անտիոք քաղաքը *(տես Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., Եր., 2007, հ. Բ, էջ 172–173)*: Սա միակ ճանապարհն էր Անտիոքի գերիշխանությունից ազատվելու համար: Ըստ Օրմանյանի աշխատության *(տես Օրմանյան Մ., նշվ. աշխ., հ. Ա, սյուն 1755)*՝ Բոհեմունդը, որ ժամանակին ձերբակալեց Ռուբեն Գ-ին, փորձում էր նույնն անել Լեւոն Բ-ի հետ, սակայն վերջինս, իմանալով այդ դավադրության մասին, Բոհեմունդին հրավիրեց հանդիպել սահմանագլխին, որ միասին գնան Անտիոք:

Շարունակությունը՝ էջ 8

Ընտանիքն արարչագործության համատեքստում. ընտանիքն Աստծո դրախտում

Սկիզբը էջ 4, 6

Եվ ինչպես եկեղեցին հնազանդ է Քրիստոսին, նույնպես եւ կանայք թող հնազանդվեն իրենց մարդկանց... ինչպես որ Քրիստոս սիրեց եկեղեցին եւ իր անձը մատնեց նրա համար, որ սրբացնի ավազանի մաքրությամբ...» (Եփես. Ե 23–29, տես նաեւ Ծննդ. Բ 20, 23–24): Եվ ուրեմն, ինչպես ավելի առաջ էլ նկատեցինք, առանց ընտանիքի՝ մարդու կենսագործունեության «բնական օրենքը» խախտվում է, ինչի մասին է Պողոս առաքյալի հետեւյալ մտածումը. *«...Բայց ասում եմ ձեզ. Հոգո՛վ ընթացեք եւ մարմնի ցանկությունը մի՛ կատարեք, քանի որ մարմինը Հոգու հակառակն է ցանկանում...»* (Գաղ. ԺԶ 25):

Ամուսնական միությա՝ ընտանիքի, բազմաճյուղ ու նվիրական լինելու եւ հոգեւոր բազմաբովանդակ կարեւոր անհրաժեշտության մասին է Արշակ Տեր-Միքելյանի հետեւյալ անդրադարձը. *«Այնպես որ, ամուսնության մեջ մարմնականը չպետք է նպատակ լինի, այլ՝ հոգեւորը, սիրո իրականացումը, ինչպես որ առաքյալն է ասում. «Որ ունիցին կանայս, որպէս թէ չունիցին» (Ա Կոր., Է 29): Վասն որո եւ Ս. Պողոս առաքյալը, խոսելով ամուսինների ճշմարիտ սիրո վրա, շեշտում է ամուսնական կապակցության մեծ նշանակությունն՝ ասելով. «Խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ ի Քրիստոս եւ յեկեղեցի» (Եփ., Ե 32), այսինքն նման է եւ փոքրիկ պատկեր է այն սերտ միության, որ կա երկնավոր փեսա Քրիստոսի եւ երկրավոր հարսն եկեղեցու մեջ: Ըստ որում եւ այս մարմնավոր հարսանիքս է խորհուրդ հոգեւոր հարսանյացն եւ «միավորութեան Հոգւոյս առ Աստուած, որպէս ասէ առաքեալն», գրում է Ս. Գրիգոր Տաթեւացին: Այդ է պատճառն, որ բարձր առաքինության ձգտող հոգեւորականը նվիրվում է Քրիստոսին եւ կուսակրոն կյանքով կապվում Հայաստանյայց Ս. Եկեղեցու հետ, վասնզի, ինչպես ասացինք, ընտանիքը սիրո իրականացումն է, որով Աստուծո արքայության համար սպասավորվում է կամ որդիք պարգեւելով, կամ սիրահորդոր գործունեությամբ եւ կամ այդ կրկին արդյունքով»* (Արշակ Տեր-Միքելյան, «Քրիստոնեական»)):

Յուրաքանչյուր ոք, անձնական մղումներից զատ, սուրբ պարտականություն ունի Աստծո, ինքն իր, ընտանիքի եւ այն հասարակության նկատմամբ, որտեղ կենսագործում է: Սա եւս տեղավորվում է ընտանիքի՝ Աստծո պատվիրանները ճանաչելու եւ պահպանելու համապատկերում. *«Աստված սեր է, եւ մեր երանությունը իրագործվում է սիրով Աստուծո հետ միանալով, հետեւաբար չկա սեր, չկա երանական միություն այնտեղ, որտեղ չկա Աստուծո օրհնությունը: Իսկ միությունն, որ սիրո եւ ճշմարտության միություն չէ, չի կարող Աստուծո արքայության իրականացման տարր կազմել այս աշխարհում, չի կարող Հայաստանյայց Ս. Եկեղեցու հիմնական պատկերը դառնալ: Ինչ անհատ խորթ է Աստուծուց կամ Քրիստոսի հետ միացած չէ ու Քրիստոսի մարմինը չէ, նա կտրված է Եկեղեցուց, նա կանգնած է առանձնակի իբրեւ եսապաշտ, որ դեռ կարոտ է Աստուծո ընդհանուր նախախնամության դաստիարակության»* (Արշակ Տեր-Միքելյան, «Քրիստոնեական»)):

Ուստիեւ ընտանիքի աստվածաշնչային չափորոշիչների անտեսումն ու մերժումն ուղիղ մարտահրավեր են Աստծուն, Եկեղեցուն ու մարդկությանը *(Ծննդ. Բ 24, հմմտ. Երկր. Օր.Դ 4, Առակ. ժդ 11)*: Ինչպես նաեւ չափազանց կարեւոր է ճշմարտությունը սիրողի համար եւ Աստծո արքայությունը փնտրողի (ըստ որում՝ նշանակություն չունեն ամուսնացած լինելը կամ չլինելը)՝ ընտանիքի կարեւոր դերակատարության գիտակցությունը. *«Ըստ այսմ՝ ինչպես որ Քրիստոս վերջնականապես ճշտեց ու սրբագործեց այն բոլոր ճանապարհներն, որոնցով պետք է մտնենք Աստուծո արքայությունն, այնպես էլ հաստատուն, սուրբ եւ աստվածադիր հիմունքների եւ սկզբունքների վրա հաստատեց այն ուխտն, որտեղից պետք է Աստուծո արքայության համար երկյուղած ու ճշմարտասեր հավատացյալք, առաքինի եւ աշխատասեր անձինք, Աստուծո որդիներ ելնեն. եւ կամ թե, որ պետք է ներկայացնե Եկեղեցու տարր կազմող պատկերը՝ սիրո արտաքին իրականացումը»* (Արշակ Տեր-Միքելյան, «Քրիստոնեական»)):

Իսահակ վրդ. ՊՈՂՈՍՅԱՆ

ԻՎԱՆ ԻԼՅԻՆ

ԿՅԱՆՔԻ ԱՐՎԵՍՏԻ ՄԱՍԻՆ



ՏԱԿՏ

Կյանքն արվեստ է, իսկ ամենայն արվեստ կոչված է ներդաշնակություն արարելու: Հասարակական ներդաշնակություն էլ գոյություն ունի, իսկ այն նախապատրաստելու, հունցելու եւ պահպանելու արվեստը կոչվում է տակտ՝ պատշաճազգացողություն:

Բայց թե ինչ է պատշաճազգացողությունը, ոչ ոք չգիտի: Արդ, նա, ով ունի, օգտվում է դրանից գրեթե անգիտակցաբար, ինտուիտիվ, ստեղծագործաբար, իսկ ով չունի, ապրում է՝ կարծես «այդպիսի բան» բնավ գոյություն չունի էլ: Ի բնե աննրբազգացը չի հասկանա պատշաճազգացողության խնդիրները:

Մարդն անմիջապես անտակտ է դառնում, եթե ուշադիր է սոսկ իր անձի նկատմամբ եւ անուշադրության է մատնում ուրիշի հոգին: Այսպես, սակայն, վարվում են շատ շատերը, նրանք, ովքեր հոգեկան կոպտություն ունեն: Նմանը բնավ ունակ չէ ընկալելու բարդն ու նուրբը՝ առավելապես իր ամբարտավանությունից ու ինքնագոհությունից կամ բնավորության կոշտ անճկունությունից ելնելով, ինչն անհնար է դարձնում ուրիշի կյանքի մեջ զգալով թափանցելը: Աննրբանկատը ինչ-որ առումով նման է կարճատեսի կամ կույրի, որը չի էլ կասկածում իր տեսողության տկարության մեջ. նրա ամեն քայլ սխալ է, նա խարխափում է շոշափելով, այն էլ հաճախ՝ ծանրաշարժորեն, ապականում ամենայն ինչ, կապում իր բոլոր ճանապարհները, ցանկապատում իրեն մշտապես առաջ եկող անհրականալի խնդիրներով եւ, իհարկե, չի էլ գիտակցում, որ ինքն անտաշի մեկն է: Նա այնպիսի վերաբերմունք է դրսեւորում այլոց նկատմամբ, որ ասես բոլորն էլ նման են մեկմեկու կամ բոլորն էլ «ցածրոգի սովորական մարդիկ են», այսինքն՝ նա չի տեսնում նրանց յուրօրինակությունն ու կոպիտ վարմունք դրսեւորում նրանց նկատմամբ: Իսկ իրեն բաժին հասած անհաջողությունները, իհարկե, վերագրում է հենց այդ նույն «մարդ-սրիկային»: Այս անհաջողություններն ամենուր կրնկակոխ հետեւում են նրան՝ աննրբազգաց մարդուն՝ ընկերական շրջապատում, աշխատանքում, անձնական կյանքում, հասարակական գործերում:

Ի սկզբանե է պարզ , որ չի կարելի ճշտիվ ճանաչել սեփական շրջապատի մարդուն: Հաճախ մերթ ընդ մերթ նետված մի հայացքն էլ, ակնթարթային ինտուիցիան էլ բավական են: Սակայն այլոց կենսական ռիթմն ու էությունը ճանաչելու համար աստիճանական ներզգացողություն է անհրաժեշտ, այսինքն՝ նուրբ ընկալունակություն, մեծ զգայունություն եւ ընկալունակ հոգու դիտողականության շնորհ: Այս ներքին ապրումով հասկանալը՝ ներզգալը, թույլ է տալիս մարդուն ստույգ կանխատեսել կամ սպասել յուր խաղընկերոջ (հնարավոր է նաեւ՝ թշնամու) հոգեկան եւ իրական հակազդեցությունները: Դրա համար հոգու մի մասն առանձնանում է՝ ասես հակառակորդի հետ կամ «հակառակորդի մեջ» ապրելու համար, որպեսզի լուսավորի ու գործի վերածի լուծվելիք խնդիրը ոչ միայն իր իսկ, այլեւ ուրիշի տեսակետից:

Այսպիսով՝ տակտը այլոց՝ եւ ընկերոջը, եւ թշնամուն ճիշտ հասկանալու, անհարկի կսմիթներից խուսանավելու, բիրտ կրքեր չհրահրելու, այլ դրանք խաղաղեցնելու եւ կենտրոնախույս ուժերի ընթացքը կասեցնելու արժեքավոր արվեստ է: Պատշաճազգացողությունը նման է ճանապարհային հսկիչի. նա «ճանապարհ է բացում», «մաքրում» ու «կապում»: Նա գիտի ինչպես պատշաճը հատուցել յուրաքանչյուրին, այնպես որ՝ բոլորն էլ իրենց «լավ հասկացված» ու ուշադրությամբ շոյված են լինում: Նա տիրապետում է ամենայն, այդ թվում նաեւ՝ անախորժ ու խճճված իրավիճակի: Նա միջնորդում է եւ չափ ու ճաշակ ներմուծում: Նա փոխըմբռնում ու խաղաղություն է հաստատում. «հաշտությունը» իր անցաբառն է՝ պարոլը, «փոխադարձությունը»՝ կարգախոսը: Նա դիվանագետ է՝ բառի ազնվագույն իմաստով: Նա միշտ հոգ է տանում այն մասին, որ մարդիկ ոչ միայն վիճեն իրար հետ, այլեւ գտնեն մեկմեկու. որպեսզի ստեղծագործ հասարակությունը եւ օրգանական համագործակցությունը հնարավոր դառնան երկրի վրա:

Պլատոնն այս առումով, թերեւս, կհարցներ՝ արդյո՞ք պատշաճազգացողությունն ինչ-որ «աստվածային» բան չի բովանդակում: Իսկ Կոնֆուցիոսը հավանաբար կպնդեր, որ նրբանկատությունը պատկանում է «Թաո»-ին, այսինքն՝ ստեղծարար «միջինքի ուղուն» («ոսկե միջինի ճանապարհ» – քաղաքական կոմպրոմիսների՝ փոխզիջումների արվեստ, ըստ որի՝ առաքինությունների հիմամբ բոլոր հակասությունները, ծայրահեղությունները հարթեցվում են՝ բացառելով սպանություններն ու քաղաքացիական կռիվները), աշխարհի հավերժական ռիթմին, որից էլ ծագում է ներդաշն հավասարակշռությունը:

ՀՈՒՄՈՐ

Արդիկ կան, որոնք տիրապետում են մի չքնաղ արվեստի, այսինքն՝ կարող են ցանկացած իրավիճակում,– որքան էլ դժվարին, անհուսալի կամ խճճված լինի,– գտնել հնուց ի վեր դրան բնորոշ կոմիզմն ու առանց շտապելու վայելել այն: Իսկ մենք հաճախ չենք էլ նկատում, որ մեր շուրջը շատ բան կա, որ իր մեջ ասես «ծիծաղի աղբյուր» է թաքցրած պահում՝ լոկ սպասելով այն վարպետին, որը ուր որ է կհայտնվի ու իրական կյանքի համար կազատի «բարուրված» ծիծաղի միջուկը: Որքա՜ն իրական մխիթարություն ու հոգեկան բերկրանք կարող է նա մեզ պարգեւել:

Սակայն երբ գալիս է հումորի վարպետն ու ցանկանում մեզ համար ի ցույց դնել կոմիզմը, մենք չենք մտածում, թե նա քմահաճորեն է հորինել դա եւ իրավիճակին բանաստեղծական երանգ հաղորդել, ավելի շուտ՝ տպավորություն է ստեղծվում, որ նա միայն լույս աշխարհ է հանել այն, ինչն ինքնին արդեն աստ էր՝ հավանորեն միայն քնած վիճակում, իսկ հիմա արդեն արթնացրել են, որ խաղա ու փթթի: Սա հմուտ ոսկերչի է հիշեցնում, որը թանկագին գոհար է ընդելուզում ի ցույց լույսի, ինչ է թե խաղա՝ իր ծածուկ ներքին շողերով, ինչ է թե փթթի, խայտա եւ մեզ սփոփանք պարգեւի:

Եթե ներքին կոմիզմն անսպասելի է ի հայտ գաիս, մենք պարզապես բռնվում ենք ծիծաղով: Բայց ողջամիտ կլիներ ծիծաղին չտրվել, ծիծաղը զսպել: Այդ ժամանակ ծիծաղը գործում է անխափան եւ ներքուստ փթթում է՝ հին ազնիվ գինու «փունջի» հանգույն, որի անզուգական համը քիմքին ուրախության նրբին, աներեւակայելի զգցողություն է հաղորդում: Զսպված ծիծաղը կարծես թե ոգեղինանում է, նրա հոգեկան լիցքն էապես վերամշակվում ու կլանվում է «կոմիկական» կենսական բովանդակությամբ:

Այդժամ պարզ է դառնում, որ զավեշտականը զգալիորեն ավելի բարդ է, քան կարող է թվալ առաջին հայացքից, որ ինքը՝ ծիծաղը, ընդամենը երեւույթի մակերեսն է, արտաքին թաղանթը: Հիմա արդեն ավելի խոր ես տեսնում ու առաջին անգամ նկատում լրջությունը կոմիզմի, որը քեզ հաճույք է պատճառում: Ա՜խ, այս զավեշտականի նրբենի լրջմտությունը. ի՜նչ հարուստ մտքերով, ի՜նչ սրամիտ կերպով է լուսաբանված: Խայտացող մտածողություն: Մտածող ուրախություն: Ծիծաղը ժպիտ է դառնում. կնճռոտվում ու փայլում են խելացի, լուսաշող աչքերը:

Եվս մեկ սուր հայացք, ու արդեն հասնում ենք ամենախոր շերտին՝ ծպտյալ ցավին: Արդ, իրականությունը հենց այսպիսին է. այն, ինչ ծիծաղողի համար կատակ է, ծաղրվածի համար ցավ է. մակերեսին ուրախությունն է, իսկ կյանքի խորությունը շարժվում է տառապանքով. եւ ցավն էլ կոմիկականի նախասկզբնական արմատն է: Մենք այն տեղին հասանք, ուր դադարում են խինդն ու խաղը, ուր դրանք կարող են նորից սկսվել, ուր մինչեւ իսկ ժպիտն է անհետանում, եւ ուր այն, այդուհանդերձ, խոր արմատներ ունի արձակած, ուր կարեկցանքի արտասուքով կարող է լցվել հանդիսատեսի երազկոտ ակնը:

Իսկն ասած՝ հենց աստ է ծնվում հումորը: Արդ, հումորն առաջանում է հոգու մելամաղձությունից, որն իր ցավը փոխակերպում է ժպիտի եւ այդու հաղթահարում այն: Այդ պահերին նա փորձում է թաքցնել տվայտանքի խորությունը, եւ մեջտեղ է գալիս մի բացահայտ կոմիզմ: Նա վիթխարի աշխատանք է կատարել. ինքը չի ծիծաղում, բայց թող այլք «ծիծաղեն», նրանք, ովքեր ոչինչ չգիտեն գաղտնիքի մասին:

Այսպես ուրեմն՝ հումորի արվեստն այն է, որ ստիպես քեզ ժպտալ քո տառապանքների մեջ: Ո՜հ, նահանջող ցավի այս նվիրական ժպիտը. դա հողեղենության նկատմամբ տարած հաղթանակի առաջին քայլն է:

Արդյոք գոյություն ունի՞ հոգեկան ցավ՝ ի զորու քեզ դիմակայելու: Ժպիտն ինձ խլում է իմ իսկ տառապանքներից: Ես արդեն դրանց «դրսից» եմ զննում: Ես արդեն բռնել, հասկացել ու առկայծող կատակի եմ վերածել նվնվան, շփոթության մատնված մարդ արարածի կոմիզմը, որը միայն ու միայն ընդունակ է իր մասին մտածել: Ես ազատություն եմ ձեռք բերել: Ես իմ իսկ «դրածոյից» վեր եմ կանգնել...

Ես հրճվում եմ հումորի սփոփանքով: Եվ կարիք չկա, որ այլք իմ ցավին քաջատեղյակ լինեն:

Ռուսերենից թարգմանությունը՝
Գրիգոր ԴԱՐԲԻՆՅԱՆԻ

ԼԵՎՈՆ Բ ՄԵԾԱԳՈՐԾԻ ԵԿԵՂԵՑԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Սկիզբը՝ էջ 7

Բոհեմունդն էլ, ոչինչ չկասկածելով, եկավ հանդիպմանը ու ձերբակալվեց ուղեկիցների հետ միասին: Լեւոնը ծանր պայմաններ դրեց Բոհեմունդի առաջ՝ գերությունից ազատելու համար: Բանակցությունները երկար ձգձգվեցին, մինչեւ դրանց միջամտեց Երուսաղեմի թագավոր Հենրի Շամպանացին, որը 1194 թվին այցելեց Կիլիկիա եւ հաշտեցրեց Լեւոնին եւ Բոհեմունդին:

Սսի 1194 թվականի հաշտության պայմանագիրը Հայոց իշխանության եւ Անտիոքի իշխանության միջեւ ուներ հետեւյալ կետերը *(տես Տեր-Պետրոսյան Լ., Նշվ. աշխ., հ. Բ, էջ 174)*՝

1. Ընդառաջելով Երուսաղեմի թագավորի խնդրանքին՝ Լեւոնն առանց փրկագնի ազատ է արձակելու Բոհեմունդ Գ-ին:

2. Բոհեմունդը չեղյալ է հայտարարում հայոց իշխանության վասալական կախվածությունն Անտիոքի իշխանապետությունից:

3. Բոհեմունդ Գ-ն, հավատարմության երդում տալով, իրեն ճանաչում է Լեւոն Բ հայոց իշխանի վասալ:

4. Անտիոքի իշխանապետությունը Կիլիկիային է զիջում Պորտելայից մինչեւ Այաս ընկած տարածքը:

5. Լեւոնի զարմուհին՝ Ռուբեն Գ-ի ավագ դուստր Ալիսը, ամուսնանում է Անտիոքի իշխանության գահաժառանգ Ռայմոնդի՝ Բոհեմունդի ավագ որդու հետ:

6. Այդ ամուսնությունից ծնված արու զավակը դառնում է Լեւոն իշխանի ժառանգորդը:

7. Ռայմոնդի մահից հետո նրա այդ նույն որդին դառնում է նաեւ Անտիոքի տերը:

8. Ռայմոնդը պատանդ է պահվում Լեւոն իշխանի արքունիքում:

9. Կիլիկիայի եւ Անտիոքի ընդհանուր գահաժառանգի անչափահասության շրջանում նրա խնամակալ է կարգվում Լեւոնը:

Ալիսի ամուսինը, որը գերության մեջ էր Լեւոնի մոտ, մահացավ 1196 թվին, որից շատ չանցած ծնվում է նրանց արու զավակը: Վերջինիս մկրտեցին Ռուբեն-Ռայմոնդ անունով *(տես Օրմանյան Մ., Նշվ. աշխ., հ. Ա, այուն 1756)*: Քանի որ Լեւոնը չուներ արու զավակ, որոշեց Ռուբեն-Ռայմոնդին իրեն ժառանգ դարձնել ու դրանով միավորել երկու իշխանապետությունները՝ ստեղծելով հայկական հզոր պետություն:

Ըստ Հովհան Դարդելի *(Հովհան Դարդել, Հայոց ժամանակագրություն, Եր., 2013, էջ 18)*՝ Անտիոքի իշխանը եւ պարոն Լեւոնը դաշինք են կնքում՝ պայմանավորվելով, որ երրորդ ուժի դեմ կռվի ժամանակ պետք է օգնեն միմյանց: Պարոն Լեւոնը նաեւ Անտիոքի իշխանից խնդրում է իրեն սահմանադրություն, օրենքներ եւ կանոններ, որոնցով ղեկավարվում էր Անտիոքը, քանի որ ուզում էր նույն օրենքներով ղեկավարել Հայոց աշխարհը:

Շարունակելի

Ալվարդ ՍԱՀԱԿՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցե՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ 517197
Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 31.07.2019 թ.
Տպաքանակը՝ 1175